

19651

329
C-26

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

ՆԱԶԻՐՆԱԼԻԶՄԻ ԴԵՄ



329
Շ-26

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԵՏԱԴՐԱԿԱՆԹԵՑԱՆ — ԵՐԵՎԱՆ, 1928

13.07.2013

19651

329
6-26
uy

27 SEP 200

15 JAN 2010

ԱՏԵՓԱՆ ԶԱՀՈՒՄՅԱՆ

ՆԱՅԻՐՆԱԼԻԶՄԻ ԴԵՄ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

==

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1928

13953-54

ԱՌԱՋԱԲԱՆ.

Ստեփան Շահումյանը կողկասյան բայլչեվիկյան կազմակերպության ղեկավար ուսուցիչներից մեկն է յեղել:

Ուսանողական տարիներից սկսած նա ամենասերտ կերպով կապվել է պրոլետարական հեղափոխական շարժման հետ յեվ մինչեվ իր կյանքի վերջին վայրկյանը պայքարել է բանվոր դասակարգի առաջին շարքերում: Դրա համար ել նրա անունը հայտնի յե կողկասյան պրոլետարիատի լայնագույն շարքերին:

Շահումյանը կոչ է արել Անդրկովկասի բոլոր բանվորներին միանալ յեվ միասնական—յերկաթե շարքերով ընդհանուր պայքար հայտարարել թե միապետական կառավարության յեվ թե կողկասյան կապիտալիստների յեվ հողատերերի ընդհանուր բանակին: Նա զրել է այդ մասին, դասախոսություններ յեվ զեկուցումներ է կարդացել Բալախանու յեվ Զաքրատի կազարմաներում յեվ Բազվի ու Թիֆլիսի բանվորական դպրոցներում:

Վոչ մի հալածանք չի թուլացրել յերբեր նրա յեռանդը: Նա միշտ մնացել է միյնվնույն անհաշտ յեվ հետեվողական կուսմունարը:

Ու այդպես ել—հեղափոխական շարժման կուսանդարմի դերում—ընկել է Թուրքմենստանի ավա-

գոտ անապատներում վարձկան մարդասպանների ձեռքից: Անգլիական իմպերիալիստները յեւ կովկասյան հակահեղափոխական կուսակցութիւնները ցանկացել են Շահումյանի յեւ Բազմի մյուս կոմունարների գնդակահարութեամբ վերջնականապէս գլխատել կովկասյան պրոլետարիատի շարժումը յեւ ջախջախել հեղափոխութիւնը:

Բայց այդ նրանց չաջողվեց:

Անդրկովկասի բանվորները յեւ գյուղացիները կարողացան թոթափել իրենց ուսերից իմպերիալիզմի յեւ հակահեղափոխութեան յուժը: Յեւ այն, ինչի համար պայքար են մղել 26 կոմունարները, այժմ արդեն իրականացւած է: Վողջ իշխանութիւնը պատկանում է բանվոր դասակարգին: Կովկասյան նացիոնալիստական կուսակցութիւնները դուրս են նետւած յերկրից վերջնականապէս: Նրանք այլեւս հենարան չունեն Անդրկովկասում: Բայց յեւ այնպէս—նույնիսկ արտասահմանում, կովկասյան այդ հակահեղափոխականները չեն կորցրել իրենց հույսերն ու յերազները: Հայ դաշնակցականները, վրացական մենշևիկները, թուրք մուսափաթականներն ամեն կերպ աշխատում են ոգտագործել մեր դժվարութիւնները յեւ, հենվելով «նախկին տիրակալների» այտորւա ժառանգների վրա, վորելի կերպ վերահաստատել յերեկւի կարգերը: Յեւ անա իրենց այդ աշխատանքին ուժ տալու համար, կովկասյան հակահեղափոխականները նաեւս ներկվում են կեղծ դեմոկրատական գուլյներով յեւ վործում են՝ այդպէս դիմակավորւած՝ խաբել բանվորներին յեւ գյուղացիներին:

Նոր է այդ միջոցը: Անցյալումս ել նրանք սո-

վորաբար այդ ձեւով ելին մոտենում մասսաներին:

Այս ժողովածուի մեջ ամփոփւած հոդւածները ցույց են տալիս, վոր Շահումյանին շատ լավ եր հայտնի նացիոնալիզմի շեշտւած հատկութիւնը: Վերաբուժի անողոր կտրականութեամբ Ստ. Շահումյանը մերկացնում է հայ նացիոնալիզմի դասակարգային բնույթը յեւ միաժամանակ պարզում նրա կեղծդեմոկրատական շաղակրատութեան իսկական իմաստը:

Ուշագրււ է առանձնապէս «Գալիք ընտրութիւնները Թիֆլիսում յեւ Դաշնակցութիւն կուսակցութիւնը» հոդւածը: Այդտեղ Շահումյանը կանգ է առնում Դաշնակցութեան սոցիալական ելութեան բընորոշման վրա յեւ շատ վորոշ շեշտում է, վոր Դաշնակցութիւնը հանդես է յեկել վորպէս հայ բուրժուազիայի կազմակերպութիւն, յեւ վոր հենց այդ բուրժուազիայի շահերը լավագույն կերպով պաշտպանելու նպատակով նա կազմել է «Կովկասյան գործունեիւթեան» մեզ հայտնի «Նախագիծը»:

«Նա, կարդում ենք Շահումյանի մոտ, սկսել է իր որգանում հոդւածներ գրել հայ բուրժուազիայի դեմ, սկսել է խառնվել բանվորների յեւ կապիտալիստների տնտեսական հարաբերութիւնների մեջ, հիմնել է բանվորների պրոֆսիութիւններ յեւ այլն, յեւ այլն: Բայց դադարե՞լ է նա արդյոք միաժամանակ ինել բուրժուական, ազգային-քաղաքական, ռեակցիոն կուսակցութիւն, ինչպիսին եր 15 տարւա ընթացքում: Ավադ, այդ կուսակցութեան գործունեիւթեանը մեր առաջն է. նա ներկայումս թերեւս ավելի բուրժուական է, նացիոնալիստական ու ռեակցիոն, քան եր յերբեմիցե» (Ստ. Շահումյան, «Յեր-

կերի ժողովածու», հ. 1, եջ 66): Այդպիսով—Դաշնակցության վողջ գործունեությունը, 15-ամյա վողջ պրակտիկան բննվում է վորպես «բուրժուական» յեվ «ռեակցիոն»: Այդպես բնորոշելով Դաշնակցության գործունեությունը՝ Շահումյանը կանգնած եր ամենավորոշ կերպով այն տեսակետի վրա, վոր Դաշնակցությունը հայկական կապիտալի, հայ բուրժուազիայի յեվ բուրժուական մտավորականության կուսակցությունն է: «Հանձին Դաշնակցություն կուսակցության, ասում ե նա, կովկասահայ բուրժուազիան ուներ հավատարիմ դաշնակից, իր ճախերի գեղեցիկ քարզմանն ու պաշտպանը—յեվ գրա համար ել նա ամենայն կերպ—նյութապես ու բարոյապես—աջակցում եր այդ կուսակցության» (Ս. Շ հ., 1, եջ 60): Շահումյանի հողվածները գրված են շատ պարզ յեվ հանրամատչելի լեզվով: Այդ պատճառով նրանք հասկանալի յեն առանց մեկնաբանությունների յեվ յերկարապատում բացատրությունների յեվս:

Նացիոնալիզմի դեմ ուղղված մեր իդեոլոգիական պայքարը պիտի տարվի այն զենքերով, վորոնց միջոցով կովել են մեր առաջին ուսուցիչները:

Շահումյանի հողվածներն ուշագրավ են հենց այն կողմից, վոր վոչ միայն տեսական ուղեցույց են հանդիսանում, այլեվ ոգնում են մեզ մոտենալու ավելի կտրուկ կերպով նացիոնալիզմի դասակարգային «դեմրի» նանստղությունը:

ԳԱԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՅԵՎ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ:

Պետական Դումայի ընտրությունները մոտենում են: Թիֆլիսի բնակչությունն այդ ընտրություններում պետք է արտահայտի իր քաղաքական կամքը: Նա պետք է ասի, թե ում է հանձնում իր շահերի պաշտպանությունը, ում է համարում ժողովրդի լայն խավերի կարիքների արտահայտիչն ու նրա ազատագրման իսկական նեցուկը: Մայիսյան ընտրություններին Թիֆլիսի բնակչությունն իր վստահության քվեն միաձայն տվեց Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական կուսակցության*) ներկայացուցչին: Վոչ մի հիմք չկար կասկածելու, վոր այս անգամ ես Թիֆլիս քաղաքի ընտրյալը կլինի Թիֆլիսի զիտակից պրոլետարիատի կողմից առաջադրած թեկնածուն:

Այն կուսակցություններից, վորոնք մասնակցում եյին մեզ մոտ առաջին Դումայի ընտրություններին և վորոնք կատարյալ պարտություն կրեցին սոցիալ-դեմոկրատիայի հետ պայքարելիս, հազիվ թե վորևէ մեկը ցանկանա նորից իր բախար վորձել գալիք ընտրություններում: Կադետները, արմատականները, ֆեդերալիստները և այլն և այլն, ժողովրդի այդ անկոչ

*) Համ. Կոմունիստական (բայլ.) կուսակցության անունն եր մինչև 1919 թ.:

բարերարներն ու հոգատարները, վարձար աշխատանք մեծ ազդեցություն ունի և յին յեկել մաշկեյան որերին՝ աշխարհում խոհեմություն կունենան իրենց ներկայացուցչին տալ չքաշել և, պետք և հուսալ, վոր իրենց ձայնը կտան սոցիալ-դեմոկրատիային, բայց կա թիֆլիսում մի կուսակցություն, վորը հույս ունի յեթե վոչ հաղթել սոցիալ-դեմոկրատիային, գոնե մի քանի թաղամասերում նրանից ձայներ կորզել ու իր սեփական ընտրյալներին տալ քաշել: Դա այսպես կոչված «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունն է: Նրա ասելով, Պետական Դումայի առաջին ընտրությունները նա «բոյկոտի» յեր յենթարկել և, ինչպես նա յեր աշխատանքով բացատրում, այդ «բոյկոտի» շնորհիվ եր, վոր կարողացավ թիֆլիսում հաղթել սոցիալ-դեմոկրատիան: «Յերբ առյուծը հանգիստ և աոնում, մկնիկն ևլ և դադան թվում»,—գրում եր այդ կուսակցության բերան «Զանգ»*) թերթը... այժմ այդ ահուկի «առյուծը» զարթնում և, չի վոչնչացնի արդյոք նա իր մոնչյունով խեղճ «մկնիկին»—սոցիալ-դեմոկրատիային, չի խլացնի արդյոք նա թիֆլիսի պրոլետարիատի ձայները: Ավա՛ղ, այդքան բարձր նա չի թռչում այժմ իր մտքի մեջ անգամ: Նա միայն հույս ունի,—ինչպես մենք վերը հիշատակեցինք,—յերկու-յերեք թաղամասերում անցկացնել իր թեկնածուներին. նա հույս ունի,—և դա ամենից գլխավորն է,—կորզել սոցիալ-դեմոկրատիայից հայկական բնույթով մասսան:

Կարճը և այդ կուսակցությունն իրապես ակրն-կալություն ունենալ թիֆլիսում հայ բնակչության

*) Դաշնակցական թերթ, վոր լույս եր տեսնում թիֆլիսում 1906 թ.:
Ծանոթ. իմը.

շահերի արտահայտիչը լինելու: Կարճը և արդյոք հայ դեմոկրատիկ մասսան—առանց յերկյուղ կրելու, թե ճակատագրական սխալ և թույլ տալիս,—իր ձայները տալ «Դաշնակցություն» կուսակցության:

Այդ կուսակցությունն ամբողջ պատմությունը և նրա ժամանակակից ամբողջ գործունեությունը հիմնովին բողոքում են նման յենթադրության դեմ:

Թիֆլիսի բնակչությունը և մասնավորապես հայ ազգաբնակչությունը՝ նախքան իր ձայները Դաշնակցություն կուսակցության թեկնածուին տալու, նախքան վստահանալու հաշվի առնել Դաշնակցությունը՝ վորպես հեղափոխական-դեմոկրատական կուսակցություն, ինչպես նա իրեն կոչում և (և վորպիսին, հավանական և բոլորովին անկեղծորեն, նա իրեն յերևակայում է), պետք և լավ ծանոթանա այդ կուսակցության անցյալին, պետք և պարզել, թե ինչ նպատակներ և նա իրեն դրել, թե ինչ գործնական խնդիրներ ունի նա իր առաջ, ինչ դեր և խաղում նա մեր, կովկասյան իրականության մեջ:

Դաշնակցություն կուսակցությունը, վորը հիմնվեց կովկասում մի խումբ առևանայ մտավորականների կողմից 15 տարի առաջ, իրեն նպատակ եր դրել—**ազատել հաճախայեից սուլթանական լծից:**

Կարճը և արդյոք այդ նպատակը վորեւ առնչություն ունենալ կովկասահայ մասսայի շահերի հետ: Ունի՞ արդյոք դա վորեւ առնչություն այն դատակարարային պայքարի հետ, վորը կովկասահայ պրոլետարիատը վրացի ու ռուս պրոլետարիատի հետ միասին մղում և համայն Ռուսաստանի բուրժուազիայի դեմ, —այն ազատագրական պայքարի, վորը հայ բնակչու-

թյունը կովկասում ամբողջ հեղափոխական ժողովրդի հետ միասին մղում է փտած կարգերի դեմ: Փոփոխության կենթարկվելը արդյոք զեթ ամենաչնչին չափով սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը հայ պրոլետարիատի ու հայ չքավորության կովկասում, յեթե այդ կուսակցությանը հաջողվեք աղատել Տաճկահայաստանն ու ստեղծել աշխտեղ նոր, թեկուզ հենց բոլորովին աղատ հայկական թագավորություն:

Բավական է զենել այդ հարցերը, վորպեսզի պարզվի ամբողջ անհեթեթությունը Դաշնակցությունը կուսակցության ձգտման՝ բառնալ կովկասահայ պրոլետարիատի, հայ ժողովրդական մասսաների ուսերին տաճկահայության ազատագրման իդեալը, ամբողջ ցնդաբանությունը ջանքերի—զբաղեցնել կովկասահայությունը **Ռուսաստանի սահմաններում հայությունը Ցանկասացում** ազատագրելու գործով:

Այդ կուսակցության ամբողջ գործունեությունը տասը տարուց ավելի ժամանակամիջոցում կայացել է հենց այդ ձգտման մեջ, և այդ կուսակցությունն իր բոլոր ուժերով կռվում էր ամեն մի քայլի դեմ, վոր արվում էր հայ պրոլետարիատի և կովկասահայ հեղափոխական մտավորականության կողմից ընդդեմ բուրժուազիայի ու կառավարության: Նման քայլերը նա վորակում էր վորպես «հայ ժողովրդի հեղափոխական ուժերի ջլատում» լեզվ «զավաճաճություն ազգային մեծ գործին—**Ցանկահայության ազատագրման**»...

Հայ բուրժուազիան աճում ու ամրապնդվում էր, շահագործելով հայ պրոլետարիատը, թալանելով ու ավերելով քաղաքի և գյուղի չքավոր խավերը: «Դաշնակցու-

թյունը հանգիստ ու անդորր - դիտում էր» հայ բուրժուազիայի սկզբնական կուտակման (первоначальное накопление) այդ չքնաղ պատկերը: Սակայն բավական էր շահագործվող մասսային գլուխ բարձրացնել իր կեղեքիչներին դեմ, բավական էր դատակարգային պայքարի ամենաչնչին արտահայտություն ընդդեմ հայ բուրժուազիայի, վորպեսզի հնչեր «Դաշնակցության» «հայրենասիրական» վայնասունը, վորով նա հիշեցնում էր բանվորությանը, վոր բոլոր հայերը յիզբայրենք են, վոր հայերի մեջ դատակարգային պայքար տեղի չպետք է ունենա, վորովհետև հայերն ունեն ընդհանուր **ազգային** թշվառներ ու ընդհանուր **ազգային** իդեալ: Ռուս կառավարությունը պաշտպանելով հայ բուրժուազիան իր խոշոր սուբսիդիաներով, ճնշում ու կեղեքում էր հայ մասսաները, զրկելով դրանց ամենատարրական քաղաքական իրավունքներից: Սակայն բավական էր, վորպեսզի ժողովրդական մասսաների մեջ յերևան գար քաղաքական գիտակցության նշույլ անգամ, բավական էր, վոր այդ մասսաների մեջ հնչեր կառավարության դեմ ուղղված բողոքի չնչին ձայն, վորպեսզի Դաշնակցությունը պարսավեր բողոքի այդ արտահայտությունները, մատնանշելով, թե հայերի հայրենիքը Տաճկահայաստանն է, թե կռվելով ոռւս կառավարության դեմ՝ միևնույնն է թե դավաճանել ազգային գործին: Իր կենտրոնական որդանի եջերում Դաշնակցությունը հաննիքալյան յերդում էր տալիս յերեք չկռվել ոռւս կառավարության դեմ և զգուշացնում էր հայերին—գոհ չըգնալ ոռւս կառավարության «պրովոկացիային»՝ չընտրել հեղափոխական ուղին:

Այդպիսով Դաշնակցությունը սխտեմատիկ կեր-

պով խեղդում եր բողոքի ձայնը հայ պրոլետարիատի մեջ, ջանում եր ճնշել հայ բուրժուազիայի դեմ ուղղված ամեն մի փորձ, կովկասում յերևան յեկած ամեն մի հեղափոխական շարժում և աշխատում եր զրազեցնել բնակչությունը բացառապես մի ֆանտաստիկ ու բախտախնդիր իդեալով՝ տաճկահայության ազատագրմամբ:

Վ Բնական է, վոր հանձին Դաճակցություն կուսակցութեան կովկասահայ բուրժուազիան ունեւ հաճախիմ դաճակից, իւ շահերի գեղեցիկ քարգմանն ու պաշտպանը—յեվ դրա համար ել նա ամենայն կերպ—նյութապես ու բարոյապես—աջակցում եր այդ կուսակցութեանը:

Սակայն հայ բուրժուազիայի ու Դաճակցություն կուսակցության շարքերից դուրս յեկած նրա իդեոլոգների ջանքերն ապարդյուն անցան, նրանք չկարողացան կանգնեցնել կյանքի հոսանքը: Նրանք միայն միջանի տարով կասեցրին կովկասահայության մեջ հեղափոխական շարժման զարգացումը, բայց արմատախիլ անել, բնդմիշտ անհնարին դարձնել այդ՝ նրանց չհաջողվեց: Տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումը կովկասում մի կողմից, և բանվորական շարժման ծավալումն համայն Ռուսաստանում և մասնավորապես կովկասում 90-ական թ. թ. վերջին ու 900-ական թ. թ. սկզբին՝ մյուս կողմից, կատարեցին իրենց գործը և հայ գավառի նկատմամբ: Դաճակցության հիպոթեզն անցավ: Հայ բանվորությունն սկսեց անցնել հեղափոխական պայքարի ուղին: Չնայած դաճակցականների ընդդիմադրության, հայերի մեջ կյանքի կոչվեցին առաջին սոցիալ-դեմոկրա-

տական խմբակները, վորոնք ի մի խմբեցին հայ բանվորներին վրացի, աուս և այլ բանվորների հետ և նրանց առաջ դրին լայն հեղափոխական խնդիրներ:

Քաղաքին հետեւց գավառը: 1903 թվականը կովկասահայության կյանքում բեկման կետ հանդիսացավ: Դեպի յեկեղեցական գույքերի գրավումը հայ մասսան անտարբեր չմնաց, ինչպես նա մնացել եր ժողովրդական բոլոր դպրոցների վոչ պակաս բարբարոսական փակման և այլ վայրենի արարքների ժամանակ, վորոնք տեղի ունեցան նախընթաց տարիներում: Քաղաքականապես արթնացող հայ գավառը, տեղ-տեղ դենքը ձեռքին, դուրս չեկավ իր բռնակալների դեմ:

Դաճակցություն կուսակցությունն ստիպված եր անձնատուր լինել: Վորպեսզի հայ բնակչության վստահությունը վերջնականապես չկորցնի, վորպեսզի իր բուրժուական ելությունը չցուցադրի, Դաճակցությունը հայտարարեց, վոր նա այնուհետև **ՏԱՃԿԱԿԱՅ ԽԱՐԳԻ** հետ միասին բնդունում և նաև **ԱՌՆԱԿԱՅ ԽԱՐԳԸ**: Դաճակցությունն ստիպված եր այդ անել այն նկատառումով, վոր այն մանր ու միջին խավերից դուրս յեկած տարրերը, վորոնց վրա նա հենվում եր, տարևրային կերպով տարվում ելին նոր շարժմամբ, և զրանց զայելու վոչ մի հնարավորություն չկար: Այսպիսով Դաճակցություն կուսակցությունը **ՅՕ-ամյա համառ պայքարից** հետո անձնատուր յեղավ:

Սակայն... նա այդ արեց վոչ թե նրա համար, վորպեսզի այնուհետև գնա ժողովրդի հետ, անցնի ազատագրական շարժման գլուխն ու ղեկավարի այդ շարժումը: Ավանդ.—նա բնդունեց «առևտրահայ հարցի»

գոյությունը՝ նպատակ ունենալով շարժմանը տալ իրեն, Դաշնակցության, հաժար ցանկալի ազգային բնույթ և այդ շարժումը կուռ ու ամուր կերպով կապել տաճկահայ հարցի հետ, դա յենթարկել տաճկահայ հարցին: Նա մի քայլ առաջ գնաց զարթնող ժողովրդի հետ, նպատակ ունենալով բռնել նրան յետևից ու շարժմանը հնարավորություն չտալ ծավալվելու ու շեղվելու այդ կուսակցության իդեալների ճանապարհից: Հանձին դաշնակցականների՝ «մեռյալները գնում եյին, վորպեսզի բռնեն կենդանիներին»:

«Այն պայթեք, վոր սկսում ե հայ ժողովուրդը Կովկասում,—գրում էր այդ կուսակցության կենտրոնական որդան «Իրոշակը»,—նոր բան չէ: Դա բաղադրիչ չեմ օճաժան մասն եմ ե վերածնութան պայթեքի, վորը մղում են միեյեմ որս հայերը Դաճնակցութան ղեկավարութամբ: Հայ ժողովուրդը կռիվ ե մղում Մաքսի ալս ու այն կողմը, վորպեսզի վերացնի բռնապետների ձեռքով բաժան չեմ ուսսահայերին օճակահայերից բաժանող սահմանը չեմ սեղծի մի ընդհանուր հայրենիք» (!):

Այդպիսով, վոչ թե ընդհանուր կռիվ դրացի ուսս, վրացի և այլ ժողովուրդների հետ՝ ընդդեմ միապետական կառավարության, այլ ազգային պայքար տաճկահայերի հետ միասին, հանուն «ընդհանուր հայրենիքի»,—անա այն նպատակները, վոր Դաշնակցություն կուսակցությունն ուզում էր բառնալ կովկասահայերի ուսերին: Այդ նկատառումով ել նա ձգտում էր բնակչության մեջ բռնկեցնել ազգայնական կրքերը, հայերի մեջ դեպի այլ ազգերը ատելություն սերմանել: Այն բռնությունները, վորոնց յենթարկվում էր

կովկասահայությունը, Դաշնակցություն կուսակցությունը բացատրում էր վոչ թե կառավարության ընդհանուր վարքագծով ու նրա ազգային քաղաքականությամբ, վորով ձգտում էր նա իրար դեմ լարել ստորադաս ժողովուրդներին, վորպեսզի ազգային յերկառակության մեջ ջարդի հեղափոխական ժողովրդի ուժերը և յերկարացնի մեռնող սեփմի զգվելի գոյությունը: Վոչ. այդ բռնության մեջ Դաշնակցությունը տեսնում էր ուսս ժողովրդի կոզմից ձգտում—կլաճել հայ ազգությունը: Իր առաջնորդողներում «Իրոշակը» ուսս ժողովրդին հայտարարում էր հայերի դավաճանը: «Քեճի վոր ուսս ժողովուրդը (ժողովուրդը, նկատի առեք, այլ վոչ թե կառավարությունը) օճահագրված եր (?) հայ ժողովրդի հետ բարեկամություն պահպանելում, վորպեսզի նա միջոցով ճվանի Կովկասը, նա բան չեր խճալում հայ ժողովրդի համար: Իսկ այժմ, յերբ արդեն հայերը նաճ պեճ չեն, ուսս ժողովուրդը ճճում ե հայերին» (Տես առաջնորդ. «Պատմական դավաճանություն»): Այստեղից ել ըլխում էր նրա ատելությունը դեպի ուսս ժողովուրդը. թերթը վերջին վորակում էր վորպես «սլավոն-քաքարական խառնուրդ», վորի մեջ—ոչ, սարսափ—ուզում են հալեցնել հայ ազգությունը:

Այսպես էր Դաշնակցություն կուսակցությունը «պարզում» ժողովրդական մասսաների քաղաքական դիտակցությունը, այսպես էր նա «հեղափոխականացնում» այդ մասսաները, այսպես էր նա «ղեկավարում» հայ ժողովրդի՝ ընդդեմ կառավարության մրդած պայքարը:

Սակայն Դաշնակցության բոլոր ջանքերը՝ պահել

շարժումն ազգային շրջանակի մեջ, յենթարկել զբան
տաճկահայ հարցին՝ ապարդշուն անցան: Ազատագրա-
կան շարժման հետագա զարգացումը մի կողմը նետեց
շովինիստական կապանքները, վորոնցով Դաշնակցու-
թյունն աշխատում էր կաշկանդել հայ գավառը: Հա-
յերը հասկացան, վոր նրանց թշնամին ուս կառավա-
րությունն է, այլ վոչ թե ուս ժողովուրդը: Հակառակ
Դաշնակցության բոլոր ջանքերին՝ ընդհանուր լծի
տակ տառապող բոլոր ժողովուրդների համերաշխու-
թյան գաղափարը մուտք գործեց հայ ժողովրդական
մասսաների գիտակցության մեջ, և այդ մասսաները,
թեև այժմ թույլ չափով, հարեցին այն միջազգային
համառուտական հեղափոխական բանակին, վորը մահա-
ցու կռիվ էր հայտարարել բուռնության ու կամայակա-
նության սեփմին: Բայց այստեղ ևս կուսակցությունը
սեակցիոն զեր խաղաց, արգելք հանդիսացավ ազա-
տագրական պայքարին. նա վոչ մի բանի առաջ կանգ
չառավ, վորպեսզի միջազգային պայքարող մասսանե-
րի քաղաքական գիտակցությունը, փոխելով բանվոր-
ների զասակարգային ինքնաճանաչումը ազգային
ինքնաճանաչմամբ, թունավորելով բանվորական և ընդ-
հանրապես զեմոկրատական մասսաները բուրժուական
նացիոնալիզմի թույնով:

Դաշնակցությունը, վորպես կուսակցություն, ոգ-
նության չեկով այն պրոփոպագիային, վորի անունն է
հայ-թուրքական կոտորած: Ուղտվելով խառնաշփոթ դը-
րությունից և բնակչության անողնական, անկազմա-
կերտ ու խնքնազործունելության անվարժ վիճակից,
բնակչության վորը չունի իր մեջ վոչ մի իսկական
հեղափոխական կուսակցություն, վոր նման զեպրե-

րում իրեն ոգնության վար, Դաշնակցությունն իր վարձ-
կան խմբերով իրենց նետեց կովի մեջ, անվանելով ի-
րեն «հայրենիքի փրկիչ», իսկ եյապես նա միայն սը-
րեց ու խորացրեց հայ-թուրքական թշնամանքը: Վո-
րակելով այդ թշնամանքը, վորպես ազգի բնական ու
անխուսափելի պայքարը, վախեցնելով բնակչությունը
«պանիսլամիզմի» ուրվականով, այդ կուսակցությունը
շփոթության մեջ գցեց նոր-նոր քաղաքական գիտա-
կցության չեկող հայ գավառն ու հաստատեց այնտեղ
իր դեկտատուրան:

Ջարգացման հետագա բնթացքը վերջնականապես
պախարակեց Դաշնակցություն կուսակցության ազգային
իդեալները, մասսաների առաջ բացեց նրա դասակար-
գային, բուրժուական եյությունը, ցույց տվեց «հայ-
րենիքը փրկողներին» իսկական զեմքը և աշտիսով
Դաշնակցության յերկրնարանքի առաջ կանգնեցրեց —
կամ յեռ մնալ մասսաներից, դառնալով նրանց միան-
գամայն խորթ, վարկարեկել իրեն նրանց առաջ, կամ՝
նոր կերպարանափոխում կատարել՝ ժխտելով այն բո-
լորը, ինչ վոր նա մինչև այդ ասել և արել էր: Դաշ-
նակցությունն ընտրեց յերկրորդ յեկը, նա զադարեց
զոռալ շարժման ազգային բնույթի, ուս ժողո-
վրդի «պատմական զավաճանության» «ընդհանուր
հայրենիքի», վորին իրր թե ձգտում են Արաքսի այս
ու այն կողմերում, պանիսլամիզմի և ուրիշ բաների
մասին ու հայտարարեց իրեն զասակարգային և, ան-
գամ — horrible dictu — սոցիալիստական կուսակցու-
թյուն: Այդ տեղի ունեցավ առաջին անգամ հոկտեմ-
բերյան ու դեկտեմբերյան նշանավոր զեպրեքից հե-
տո: Պատմական այդ մեծ որերը հակառակն ցնցում

13953-57

առաջացրին ժողովրդական մասսաների մեջ և վերջինս-
 ների քաղաքական դաստիարակության տեսակետից
 արեցին ալնքան, վորքան չէին կարող անել խաղաղ
 զարգացման ամբողջ տարիները: Կուսակցությունն
 ստիպված եր ասպարեզ գալ լեզու կերպով: Պետք եր ցույց
 տալ վորոշ սոցիալական credo: Յեթե հոկտեմբերյան
 որերից հետո նա դուրս գար նույն ձառերով, վորոնցով
 նա դուրս եր գալիս մինչ այդ, անվանելով իրեն միե-
 նույն ժամանակ հեղափոխական կուսակցություն, նրա
 հեղափոխականներին հիմարանոց կուղարկելին կամ ել
 առանց ալլեալության կղասելին «Московские Ве-
 домости» թերթի «հայրենասերների» շարքին: Այդ,
 իհարկե, նա չուզեց և... իրեն սոցիալիստական կու-
 սակցություն հայտարարեց: Յեւ այս դեպքումն ել նա
 ձևացրեց, թե առանձին վոչինչ չի պատահել նրա
 հետ: Նա ջանում եր համոզել քննադատությունը, վոր
 նա յերբեք **ճացիոնալիստական** կուսակցություն չի
 յեղել, և վոր, ընդհակառակը, նա միշտ ել յեղել և **զա-
 սակարգալից** ու **սոցիալիստական** կուսակցություն:
 Ապացույցի յետևից ընկնելու կարիք չկար. գրեթե իր
 հիմնվելու որից կուսակցությունն ուներ իր գրված
 ծրագիրը, վորն իր մեջ կետեր եր պարունակում դա-
 սակարգային կուլի, աշխատավոր մասսաների և այլ և
 այլ բաների մասին: Թվում եր, թե բավական և հեն-
 վել այդ թերթի վրա, վորը ձեռն համար արտագրված
 եր նարոդովոլեցների ծրագրից կուսակցությունը հիմ-
 նող յերկու-յերեք «գրագետ» մարդկանց կողմից, մի
 թերթի, վորը վոչ մի առնչություն չուներ այն շարժ-
 ման հետ, վորի գլուխն եր անցած կուսակցությունը,
 այն նպատակների հետ, վորոնց վերջինը հետապըն-

դում եր, վերջապես մի թերթի, վորը արհամարհվում
 ու ծաղրվում եր 15 տարի շարունակ այդ թերթը կադ-
 մողների կողմից,—վորպեսզի համոզեն միամիտ մարդ-
 կանց, թե Դաշնակցություն կուսակցությունը իսկզբանե
 անտի իսկական սոցիալիստական կուսակցություն և
 յեղել:

Այսպես թե այնպես—Դաշնակցությունն սկսեց ի-
 րեն սոցիալիստական կուսակցություն անվանել: Սա-
 կայն այստեղ նա՝ իր «զարգացման» ընթացքում՝ յերկու
 ետապ անցավ: Սկզբում՝ իր լեզու «Հառաջ» թերթի ա-
 ոաջին իսկ համարից՝ նա իրեն անվանեց **աշխատավոր
 մասսաների** կուսակցություն և դրանից հետո, ամենայն
 ուր, իր բոլոր հոգվածներում բոլոր հոյովներով կրկնում
 եր «աշխատավոր մասսաներ» բառերը: Դրանից հետո՝
 տեսնելով այն մեծ դերը, վորը աղատագրական պայ-
 քարում խաղում եր պրոլետարիատը,—տեսնելով, վոր
 հայ կյանքում միակ ակախի հեղափոխական դասակար-
 գը—պրոլետարիատն և՛ Դաշնակցությունն սկսեց նը-
 րան շողոքորթել ու իրեն ել հայտարարեց «պրոլետա-
 րիատը ղեկավարող կուսակցություն»:

Առաջին անգամ այդ տեղի ունեցավ հունիսի
 22-ին փառավոր քաղաքական գործադուլից հետո,
 վորը կազմակերպեց Թիֆլիսում պրոլետարիատը: Յեւ
 դրանից հետո՝ թերթի ամեն մի համարում դաշնակցա-
 կաններն անպատճառ կրկնում եյին, վոր նրանք «հայ
 պրոլետարիատի ղեկավարներն են», իսկ հետագա-
 յումն ել,—նրա **միակ** ղեկավարները:

Ահա այս դեմքով և այսոր մեր առաջ կանգնած
 Դաշնակցություն կուսակցությունը:

Նա սկսել և իր որդանում հոգվածներ գրել հայ

բուրժուազիայի դեմ, սկսել և խառնովել բանվորների և կապիտալիստների տնտեսական հարաբերությունների մեջ, հիմնել և բանվորների պրոֆմիություններ և այլն և այլն:

Բայց դադարել և նա արդյոք միաժամանակ լինել բուրժուական, ազգային-քաղաքական, ռեակցիոն կուսակցություն, — ինչպիսին եր 15 տարվա ընթացքում: Ավանդ. այդ կուսակցության դորժուենյությունը մեր առաջն է. նա ներկայումս թերևս ավելի բուրժուական է, նացիոնալիստական ու ռեակցիոն, քան եր յերբեկցես:

Նախ և առաջ Դաշնակցությունը դեռ չի հրաժարվել մինչև որս իր տաճկահայ ավանտյուրայից, հայ ազգային ռեակցիայի այդ ռեզերվից, վորն այնքան ծանր փաստ հասցրեց կովկասահայ բնակչության, այնքան վիշտ ու տառապանք պատճառեց տաճկահայության, և այնքան անսխալորեն ծառայություն մատուցեց բուրժուազիային:

Յերկրորդ, և վորը գլխավորն է — քողարկվելով սոցիալիզմով՝ Դաշնակցությունը կատաղի կելի և մղում բանվորական շարժման դեմ կովկասում: Նա մինչև որս «հեղափոխական» կուսակցություն եր անվանում իրեն, վորպեսզի 15 տարի շարունակ կովի հեղափոխության դեմ: Նա այժմ իրեն անվանում է «հեղափոխական» ու «սոցիալիստական» կուսակցություն, վորպեսզի կովի թե հեղափոխության և թե սոցիալիզմի դեմ:

Միակ սոցիալիստական կուսակցությունը կովկասում, վորի դրոշի տակ ժողովվում են ըստ ազգերի բանվորները, վորի ազդեցության տակ հեղափոխական

կյանքի ուղին և անցնում հայ դավառը, վրացականից հետո, Ռ. Ս. Դ. Բ. կուսակցությունն է: Պարզ է, վոր իր բուրժուական ու ռեակցիոն նպատակներն իրագործելու համար՝ Դաշնակցություն կուսակցությունը պետք է կռիվ հայտարարեր իր մահացու թշնամուն — կովկասյան սոցիալ-դեմոկրատիային:

Առաջին և ամենագլխավոր նպատակը, վորը դնում է իրեն կովկասյան սոցիալ-դեմոկրատիան, ինչպես իսկական միջազգային կուսակցություն, դա բոլոր կովկասյան բանվորների, առանց ցեղի ու ազգության խտրության, պրոլետարական դրոշի տակ խմի խմբելն է: Դաշնակցությունն իր բոլոր ուժերով արգելք է հանդիսանում դրան, ձգտելով պահել իր շարքերում հայ բանվորներին, մեկուսացնել ու զատել դրանց այլ ազգությունների բանվորներից: Նա ջանում է արգելք հանդիսանալ այդ մերձեցման վոշ միայն քաղաքական, այլ և պրոֆեսսիոնալ ասպարիզում: «Կուսակցական» ու «սոցիալիստական» միությունների պատրվակի տակ նա կազմակերպում է հայ ազգային միություններ, հակադրելով դրանց անկուսակցական ու միջազգային միություններին և այդպիսով կազմալուծում ու զերոյի յե հավասարեցնում բանվորների պրոֆեսսիոնալ պայքարը: Նա գործ է դնում իր բոլոր ուժերը, վորպեսզի պատկերացնի կովկասի սոցիալ-դեմոկրատիան, վորն իր շարքերում խմի յե խմբում վրացի, հայ, ռուս և վերջին ժամանակները թաթար բանվորներին, — վորպես հայ պրոլետարիատին ու հայ ազգությանը թշնամի վրացական և ցեղիցալիստական կուսակցություն:

Բայց կովելով կովկասյան սոցիալ-դեմոկրատիա-

յի դեմ, Դաշնակցութիւնը կռիւմ է վոչ միայն սոցիալիզմի, այլ և բանվոր դասակարգի դեմ: Կռիւլով վոչ միայն միակ սոցիալիստական, այլ և միակ դեմոկրատական կուսակցութեան դեմ՝ կռիւլաւորում՝ նա կռիւմ է ազատութեան, կռիւլաւորում ժողովուրդների հառաջադիմութեան դեմ ու ծառայում է ռեակցիայի շահերին: Իմիջի ալլոց բոլորի հիշողութեան մեջ դեռ թաքնւում են Դաշնակցութեան մոռուկ անցյալից յերկուցայտուն, բնորոշ մոմենտներ: Դա, նախ և առաջ՝ կուսակցութեան փախուստն եր թիֆլիսի «Հեղափոխական կազմակերպութիւնների համաձայնութեան բյուրոյից» ղեկավարների նշանավոր որերին, յերբ նա արդեն ստորագրել էր մի շարք պրոկլամացիաներ, ուր կռիւլ եր հայտարարւում կառավարութեանը, փախուստ մի աշխարհի ժամանակ, յերբ Ռուսաստանում կրած առաջին պարտութեան մասին դեռ տեղեկութիւններ չէին ստացվել, և յերբ թիֆլիսում ամենայն ուր վհուկան դեպքեր էլին սպասվում: Յերկրորդ՝ այն զգվելի անհարշուրակային վոստիկանների դերը, վոր խաղացին դաշնակցական հերոսները 1906 թ. ոգոստոսի 25-26-ին Բազմում, զինված դուրս գալով սոցիալ-դեմոկրատիայի կողմից հայտարարված քաղաքական դործադուլի դեմ:

Այսպէս և մեղ պատկերանում այսպէս կոչված «հեղափոխական» ու այսպէս կոչված «սոցիալիստական» Դաշնակցութիւն կուսակցութեան պատմական ու ժամանակակից դերը:

Յով այդ կուսակցութիւնը հույս ունի ընտրութիւնների ժամանակ միքանի թաղամասերում մրցիլ սոցիալ-դեմոկրատիայի հետ. նա հույս ունի ստանալ թիֆլիսի հայ բնակչութեան ձայները:

Ասպարեղ գալով այժմվա ընտրական պայքարում, Դաշնակցութիւնը չկարողացավ թագցնել իր «ազգային դրոշակը»: Հոգ տանելով բոլոր հայ բուրժուաների շահերի մասին, վորպեսզի նրանցից վոչ մեկը ձայնից չզրկվի, Դաշնակցութիւնն այդ նպատակով կազմել է թիֆլիս քաղաքի բոլոր հայերի ցուցակը: Մյուս կողմից ել՝ նա վոստիկանների դեր և ստանձնել, նպատակ ունենալով դուրս դնել անցյալ տարվա ցուցակներից այն ընտրողներին, վորոնք կարող են իրենց ձայները տալ սոցիալ-դեմոկրատներին: Ազիտացիայի ժամանակ նա զիմում է բոլոր հայերին՝ ձայն չտալ սոցիալ-դեմոկրատներին, վորովհետև նրանք վրացական ցոցիոնալիստներ են ու քսեմի լեն հալերին: Նա լուրեր է տարածում, թե իբր սոցիալ-դեմոկրատիան մտերմացել է թաթար խուլիգանական տարրերի հետ՝ հայերի դեմ կռիւլու նպատակով և այլն: (Ահա փաստ. Դաշնակցութեան կողմից տարածած լուրը, թե թիֆլիսի նշանավոր Ալի-Բալան անդամ է սոցիալ-դեմոկրատական ընտրական հանձնաժողովի):

Մի խոսքով՝ Դաշնակցութիւն կուսակցութիւնը իրեն հավատարիմ մնալով՝ կանգ չի առնում վոչ մի միջոցի առաջ, վորպեսզի բորբոքի հայերի նացիոնալիստական կրքերը, վորպեսզի նրանց մեջ առեւտրութիւն տարմանի դեպի սոցիալ-դեմոկրատիան, վորպէս վրասերմանի դեպի սոցիալ-դեմոկրատիան և կորզի նրանից հայ դեմոկրատական մասսան:

Կարճ և արդյոք Դաշնակցութիւնն իր նպատակներին հասնել գալիք ընտրութիւններին: Կարճ և արդյոք նա հաղթել սոցիալ-դեմոկրատիային թեկուզ

յի դեմ, Դաշնակցութիւնը կոմունէն է վոչ միայն նոցիալիզմի, այլ և բանվոր դասակարգի դեմ: Կովկասում վոչ միայն միակ սոցիալիստական, այլ և միակ դեմոկրատական կուսակցութեան դեմ կովկասում՝ նա կոմունիստական, կովկասյան ժողովուրդների հառաջադիմութեան դեմ ու ծառայում է ռեակցիայի շահերին: Իմիջի ալոց բոլորի հիշողութեան մեջ զեռ թաքմ են Դաշնակցութեան մոտիկ անցյալից յերկուցայտուն, բնորոշ մոմենտներ: Դա, նախ և առաջ, կուսակցութեան փախուստն էր Թիֆլիսի «Հեղափոխական կազմակերպութիւնների համաձայնութեան բյուրոյից» ղեկավարների նշանավոր որերին, յերբ նա արդեն ստորագրել էր մի շարք պրոկլամացիաներ, ուր կոչով էր հայտարարվում կառավարութեանը, փախուստ մի այնպիսի ժամանակ, յերբ Ռուսաստանում կրած առաջին պարտութեան մասին զեռ տեղեկութիւններ չէին ստացվել, և յերբ Թիֆլիսում ամենայն ուր վճռական դեպքեր էլին սպասվում: Յերկրորդ՝ այն զգվելի սև-հարյուրակային վոստիկանների դերը, վոր խաղացին Դաշնակցական հերոսները 1906 թ. ոգոստոսի 25-26-ին Բազում, զինված դուրս գալով սոցիալ-դեմոկրատիայի կողմից հայտարարված քաղաքական գործադուլի դեմ:

Այսպես է մեզ պատկերանում այսպես կոչված «հեղափոխական» ու այսպես կոչված «սոցիալիստական» Դաշնակցութիւն կուսակցութեան պատմական ու ժամանակակից դերը:

Յով այդ կուսակցութիւնը հույս ունի ընտրութիւնների ժամանակ միջանի թաղամասերում մրցել սոցիալ-դեմոկրատիայի հետ. նա հույս ունի ստանալ Թիֆլիսի հայ բնակչութեան ձայները:

Ասպարեզ գալով այժմվա ընտրական պայքարում, Դաշնակցութիւնը չկարողացավ թագցնել իր «ազգային դրոշակը»: Հոգ տանելով բոլոր հայ բուրժուաների շահերի մասին, վորպեսզի նրանցից վոչ մեկը ձայնից չզրկվի, Դաշնակցութիւնն այդ նպատակով կազմել է Թիֆլիս քաղաքի բոլոր հայերի ցուցակը: Մյուս կողմից էլ՝ նա վոստիկանների դեր և ստանձնել, նպատակ ունենալով դուրս գցել անցյալ տարվա ցուցակներից այն ընտրողներին, վորոնք կարող են իրենց ձայները տալ սոցիալ-դեմոկրատներին: Ազիտացիայի ժամանակ նա ղիմում է բոլոր հայերին՝ ձայն չտալ սոցիալ-դեմոկրատներին, վորովհետև նրանք վրացական ցոցիոնալիստներ են ու քոհամի լեն հայերին: Նա լուրեր է տարածում, թե իբր սոցիալ-դեմոկրատիան մտերմացել է թաթար խուլիգանական տարրերի հետ՝ հայերի դեմ կովկասում նպատակով և ալին: (Ահա փաստ. Դաշնակցութեան կողմից տարածած լուրը, թե Թիֆլիսի նշանավոր Ալի-Բալան անձամ է սոցիալ-դեմոկրատական ընտրական հանձնաժողովի):

Մի խոսքով՝ Դաշնակցութիւն կուսակցութիւնը իրեն հավատարիմ մնալով կանգ չի առնում վոչ մի միջոցի առաջ, վորպեսզի բորբոքի հայերի նացիոնալիստական կրքերը, վորպիզի նրանց մեջ ատելութիւն սերմանի զեպի սոցիալ-դեմոկրատիան, վորպես վրացական նացիոնալիստական կուսակցութիւն և կորզի նրանից հայ դեմոկրատական մասսան:

Կարճիկ և արդյոք Դաշնակցութիւնն իր նպատակներին հասնել գալիք ընտրութիւններին: Կարճիկ և արդյոք նա հաղթել սոցիալ-դեմոկրատիային թեկուզ

Թիֆլիսի միքանի թաղամասերում: Վնչ. կարող ենք մենք պատասխանել այդ հարցին խորին համոզմամբ: Թիֆլիսի հայ բնակչութիւնը վաղուց և անցել այն շրջանից, երբ մի զույգ հեղափոխական ֆրազներով ու ազգային դեմագոգիայով կարելի չէր նրան գլխից հանել: Թիֆլիսի բոլոր քաղաքացիները, դրանց մեջ և հայերը, բոլոր նրանք, վորոնց համար թանգ և ազատութեան գործը, յերես կգարձնեն Դաշնակցութեանից: Ներկա ընտրութեաններին Թիֆլիսի ընտրողները լավ դաս կտան Դաշնակցութեանը, այս «խակական հայ մարդկանց» նույնպէս, ինչպէս նրանք լայն ընտրութեաններին ժամանակ դաս տվին «խակական վրացի» և «խակական ռուս» մարդկանց:

(Գրված է 1906 թվին ռուսերին: Տըպ-ված է «Наши Понедельники» թերթի № 1-ում—1906 թ.):

ԶԻԱԹԻԱՆՈՎԻ ՃԱՌԸ ՅԵՎ «ԱԼԻՔԻ» *) «ԱԶԳԱՍԵՐՆԵՐԸ».

Միքանի որ առաջ մենք հայտնել էինք այն լուրը, վոր հայ-թուրքական կոտորածի առիթով յեղած հարցապնդումը Պետական Դումայում ստորագրել են հայ պատգամավորների հետնախ թուրքերը: Հեռագիրն այժմ հաղորդում է մեզ համառոտ կերպով այն ճառերը, վոր ասվել են Դումայում այդ առիթով: Սոսոկ-ներին մեջ կա և մի թուրք—Զիաթխանով,—վորի ճառը, վուպես, ամենից առաջ, մի քուրճի ճառ, սաստիկ զայրույթ և պատճառել «Ալիքի» «ազգասեր» ու «քրե-մարիս հայ» հրապարակախոսներին:

Բայց ի՞նչ է ասել Զիաթխանովը:

«Զիաթխանովը—կարդում ենք հեռագրում—մի կրակոտ ճառով նկարագրում է այն պատկերը, վորի ֆոնի վրա ծագեց ցավալի պրովոկացիան: Նա ասում է. «Կառավարութեանն ավելի զիջողաբար եր վերա-բերվում վերջին ժամանակները մեզ թուրքերիս, վորովհետեւ մենք քնած էինք ամբողջ հարյուր տարի: Մենք հաշտ ապրում էինք հայերի հետ, և վոչ մի զինված ընդհարում տեղի չէր ունենում մեր մեջ: Մեզ սկսեցին հավատացնել, վոր հայերն ուզում են

*) Դաշնակցական թերթ 1906 թ., վոր լույս եր տեսնում Թիֆլիսում:

սեփական թագավորություն ստեղծել և կլանել թուրքերին: Իսկ հայերին վախեցնում էյին պանիսլամիզմի ուրվականով: Բավական եր սկիզբ դնել պատերազմին. արյունոտ վրեժխնդրության սովորությունը լրացրեց դործը: Բավական է, չերկու տարի յե՛ մենք լողում ենք արյան ծովի մեջ...»:

Ամեն մի անաչառ ու շովինիզմից չկուրացած մարդ գոհունակությամբ պետք է կարդա այս հակիրճ, խելացի ու անկեղծություն բուրոդ տողերը: Բայց թուրքի «հոտը» խեղդում է, խելագարության և հասցընում «սոցիալիստ» դաշնակցականներին, և հայոցյանքներ են, վոր թափվում են թշվառ Զիաթխանովի գլխին...

Պատճառաբանություն ունեն, իհարկե, հարգելի «հրապարակախոսները»: Ի՞նչպես և հանդգնել Զիաթխանովը ասել. «Մեզ հավաստեցնում էյին, վոր հալե-րըն ուզում են ստեղծել իրենց քաղաքագործությունը յեվ կլանել քուրճերին»: Բայց մի՞թե այդ սուտ է, պարոններ, մի՞թե սուտ է, վոր թուրք ազեա մասսաների վրա մութ ուժերը, պրովոկացիան, ազդում էյին գըլխավորապես հենց այդ տեսակ «առասպելներով»: Մենք գիտենք, վոր «սեփական թագավորություն ստեղծելու» ցանկություն հայ ժողովուրդը չի ունեցել յերբեք. այդ ցնորքներով ապրել են միայն վորոշ ժամանակ «հեղափոխական» կոչվող մի խումբ քաղաքական մանուկներ (կճանաչեք յերևի նրանց, չե՞, պարոններ, նրանք կարծեմ մինչև որս ել սրտի խորքում չեն դադարում փայփայել այդ ցնորքները): Բայց Դումայում արտասանված խոսքերի մեջ չի ասված, թե հայ ժողովուրդն իսկապես ձգտել և այդ բա-

նին և յեղել պատճառը թուրք ժողովրդի թշնամության ու զժբախտ կոտորածի: Ընդհակառակն, այնտեղ ասված է, վոր այդ յեղել և պրովոկացիայի մի միջոց կառավարության ու թուրք խուլիգանների ձեռքին: Դուք ուզում եք ասել, վոր ինքը Զիաթխանովն այդ խուլիգաններից մեկն է: Գուցե, դուք ավելի լավ կարող եք իմանալ այդ: Բայց այդ դեպքում բավականացեք հենց այդքանով և մի քողարկեք ճշմարտությունը, մի պղտորեք ջուրը այնտեղ, ուր նա մաքուր է:

Բայց Զիաթխանովի գլխավոր հանցանքն այդ չե, իհարկե: Նա հանդգնել և ասել իր ճառի մեջ և մի ուրիշ բան. «Մեզ հավատացնում էյին, վոր հայերը սեփական թագավորություն են ուզում ստեղծել... Իսկ հալե-րին վախեցնում էյին պատճառաբանելով ուրվականով»: Ահա այս վերջին, ընդգծած խոսքերն են, վոր առանձնապես զայրացրել են «Ալիքին»: Բայց ինչո՞ւ յեղաբանում «Ալիքը»: Մի՞թե սուտ է, վոր հայ ժողովրդին «վախեցնում էյին պանիսլամիզմի ուրվականով» Դիմեցեք ձեր հիշողությանը, «Ալիքի» հարգելի խմբագիրներ. փորձեցեք հիշել՝ ձեզանից ամեն մեկը քանի՞ տասնյակ լրագրական եջեր և մրոտել, քանի՞-քանի անգամ թե այստեղ Թիֆլիսում և թե մանավանդ դավաճներում հրապարակական դասախոսություններ և կարդացել պանիսլամիզմի մասին, աշխատել և հավատացնել պանիսլամիզմի մասին, վոր հայ-թուրքական կոտորածի հիմնական պատճառը, հայի թշվառության գլխավոր աղբյուրը պանիսլամիզմն է: Մի՞թե դա չի նշանակում «վախեցնել» ժողովրդին... Թե՞ դուք ուզում եք ասել, վոր հայ ժողովրդին վախեցնում է իսկապես:

Վոչ, «Ալիքը» հասկանում է Զխաթխանովի խոսքերի խմաստը: Թուրքերին վախեցրել են հայերով, հայերին վախեցրել են թուրքերով: Յերկու կողմերի մեջ էլ փոխադարձ թշնամություն են սերմանել, և թշնամության այդ հողի վոճրագործ «շեյթանը» կառուցել է իր արյունոտ շենքը, ահա թե ինչ է ուզում ասել թուրք պատգամավորը: Յեւ «Ալիքը» զայրանում է: Բավական չե—ասում է նա,—վոր Զխաթխանովի խոսում է «հայկական թագավորության» առասպելի մասին,—դեռ փորձում էլ է սեվացնել հայ օսուրը, կամ նրա մի մասը, ցույց տալով, վոր նա յեվս, յեճարկվել է կառավարական արովակացիայից (կուրսիվը մերն է), իբր թե զրդված համխալամության սպառնալիքներից»:

Ահա թե ինչու յե զայրացած «Ալիքը»: Հայերն աստվածընտիր ազգ են, նրանք յերբեք չեն յենթարկվի պրովոկացիայի, նրանց մեջ չեն կարող գտնվել խուլիգաններ: Հայ-թուրքական կոտորածի ամբողջ մեղքն ընկնում է թուրք ժողովրդի վրա: Այդ են ուզում ասել մեր «ազգասերները»:

Բայց ո՞ւմ էք ուզում խաբել, պարոններ, վոչ միայն ժողովրդական լայն խավերում, տգետ հայ մասայի մեջ, այլ և նրա «առաջադեմ», «հեղափոխական» կոչվող շարքերում կան խուլիգաններ, վորոնք թուրք խուժանից վոչ պակաս գազանություն ու բարբարոսություն են ցույց տվել այդ յեղրաշրասպան պատերազմի ընթացքում: Յեւ այդ վոչ միայն հարձակվողների դեմ, այլ և այնպիսի տեղերում և այնպիսի գեպքերում, վորտեղ վոչ մի խոսք չեր կարող լինել ինքնապաշտպանության մասին: Այդպիսի գեպքեր չատ գիտենք մենք, ավելի շատ գիտե ինքը հայ ժող-

ղովուրդը, ավելի շատ գիտեք դուք ինքներդ, պարոններ: Ինչո՞ւ յեք կեղծում, ուրեմն: Ո՞ւմ էք ուզում խաբել դուք զբանով:

Իհարկե ճիշտ է, վոր թուրք մասսան ներկայումս ավելի անկուղտուրական է և ավելի հեշտ յենթարկվող պրովոկացիայի: Ճիշտ է, վոր յեթե նա գոնե այնքան բարձր լիներ իր քաղաքական գիտակցությամբ, վորքան հայերն են, կառավարությունը չեր կարողանա իրագործել իր զաղրելի վոճրագործությունը... Բայց ճիշտ է և այն, վոր հայ մասսան էլ շատ հեռու չե գնացել իր գիտակցությամբ, վոր նա յեւ յենթարկվեց՝ թեև անդրադարձ կերպով՝ կառավարության պրովոկացիային, նրա մեջ էլ արթնացան գազանային ինստինկտներ, և դրա շնորհիվ կոտորածն ավելի վատ ձև ստացավ և ավելի լայն չափեր ընդունեց, քան նա կարող էր ընդունել:

Իհարկե մենք շատ հեռու յենք այս բոլորով հայ ժողովուրդը «մեղադրելուց», «դատապարտելուց». այդ մենք թողնում ենք պանխալամիսներին, ինչպես ձեզ ել՝ պանարմենիստներից թողնում ենք «դատապարտել» թուրք ժողովուրդը: Այդ կոտորածը վոչ հայ և վոչ թուրք ժողովուրդների հացանքն է, այլ նրանց դժբախտությունն է:

Հարկավոր չե միայն կեղծել, ծածկել մեր պակասությունները: Հարկավոր չե մանավանդ անմեղ գառնուկներ ձևանալ այն մարդկանց, վորոնք անմեղակից չեն ժողովրդի ագիտության մեջ, վորոնք սխտեմատիկաբար—գիտությամբ թե անգիտությամբ—մթնացրել են ժողովրդի ինքնագիտակցությունը և պարարտացրել են իրենց «գործունեյությամբ», պարոններ, այն հողը, վորի վրա բուսել և արյունոտ պրովոկացիան:

Հայհուցիկ Զխաթխանովներին, վորպես անհատների, ինչքան կամենում էք, բայց մի կեղծեք իրողությունը, մի ազավաղեք ճշմարտությունը:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ — «ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՂԵԿԱՎԱՐ».

«Ալիքի» № 47-ում, 27 մինդրելցիների դատին նվիրած մի հոգվածի մեջ, մենք կարդում ենք ի միջի այլոց հետևյալ տողերը.

«Պրոլետարիատի ղեկավար չերկու խոշոր կազմակերպություններն են՝ Հ. Հ. Դաշնակցությունը և սոցիալ-դեմոկրատիան»... գործադուլ էլին հայտարարել թիֆլիսում հունիսի 22-ին:

«Պրոլետարիատի ղեկավար՝ Հ. Հ. Դաշնակցությունը»... այդպիսի ցինիկություն առաջին անգամն է, վոր թույլ է տալիս իրան «ինքը» «Ալիքը»:

Յերբ սրանից մի չերկու շաբաթ առաջ թիֆլիսի գործաթող հացթուխների ժողովում մի չերիտասարդ դաշնակցական աղաղակում եր «կեցցե սոցիալիզմը, կեցցե բանվոր դասակարգի շահերի պաշտպան Դաշնակցությունը», բոլոր ներկա գտնվող դաշնակցականներն ամաչելով նայում էլին միմյանց և կարմրում: Յեվ ամենից շատ կարմրում եր, կարմրում եր բառիս բուն նշանակությամբ, այդ ժողովի նախագահ պ. Թոփչյանը*): Բայց այսոր այդ նույն պարոնը իր ձեռքով, առանց քաշվելու գոնե այն 27 ղինվոր-հերոսների անունից, վորոնց նվիրված է հոգվածը, անվանում է

*) Դաշնակցականների պարագլուխներից եր 1903-08 տարիների:

Դաշնակցությունը «սլոլետարիատի ղեկավար» կուսակցություն: Թուղթը, ճիշտ է, չի բողոքում վոչ մի բանի դեմ, ամեն ինչ տանում է, բայց, պարոններ, հարկավոր է մի փոքր ամաչել: Ամբողջ 19 տարիների ընթացքում խոսել «աղգալին» ներքին համերաշխություն մասին, հակադրել իրան սոցիալ-դեմոկրատիային հենց նրանով, վոր սոցիալ-դեմոկրատիան պաշտպանում է «մի դասակարգի» շահերը, իսկ Դաշնակցությունը «ամբողջ ազգի» շահերը, հանդիմանել ս.դ. ներքին, մինչև անգամ «դավաճաններ» անվանել, վորովհետե նրանք «դասակարգային կռիվ են առաջացնում հայկական կյանքում», մտրակներով ցրվել գործադուլ անող պրոլետարներին և հրահանգել նրանց, վոր չհանդգնեն խանգարել «ազգային զիսցիպլինան» և այլն և այլն,— և հետո հանկարծ կանգնել և հայտարարել «մենք պրոլետարիատի ղեկավարներ ենք»—այդ առնվազն... ամոթ է, պարոններ:

Մեզ, իհարկե, չի վշտացնում այն հանգամանքը, վոր այժմ ամեն վոք ձգտում է փաթաթվել պրոլետարիատի վզով և յերգվել նրա անունով: Ընդհակառակը, դա միանգամայն բնական է և միանգամայն ուրախալի մեզ համար, վորովհետե դա մեր սեփական հաղթությունն է, գիտակից պրոլետարիատի հաղթությունը, վոր ստիպում է ծուռել խոնարհել իր առաջ իր յերեկվա բանվորական հարց չճանաչող մեծամիտ «ազգասերներին»: Յերեկ չե առաջի ուրբ դուք աղաղակում էլիք, վոր հայ ժողովրդի միակ «մտահոգության առարկան» պետք է լինի տաճկահայ դատը և յերդուլում էլիք վոչ մի դեպքում չենթարկվել «Սպիտակ Սուլթանի» պրովոկացիային և «չլատել հայ հեղափոխական ուժե-

րը»։ **ՅԵՆԵԿ**, բանվորական շարժման ազդեցութեան ուսկ մի փոքր արթնացած հալ մասսայի հրամայականն պահանջի հանդեպ, դուք գիշեցիք և ճանաչեցիք «ուստահալ գատի» դոյութեանը։ **Այստե**, նույն ալդ բանվորական շարժման հորձանքի առաջ, դուք չեք բավականանում «ուստահալ գատ» անորոշ բառերով և արդեն խոսում եք «աշխատավոր ժողովրդի» և մինչև անգամ ուղղակի պրոլետարիատի մասին։ Այժմյանից՝ դուրկ վորեն քաղաքական դավանանքից, դուք շարունակ կըրջեք ձեր քթերը քամու ուղղութեամբ և ավելի կըրծենք կովոյ պրոլետարիատի առաջ։

Այդ մենք գիտենք, բայց ալդ չե, կըկնում ենք, վոր զարմացնում և մեզ։ Մեզ զարմացնում և միայն այն ցինիզմը, վորով դուք կատարում եք ձեր մեծամորֆոզները։ Շարունակեցեք «սոցիալիստ» հայտարարել ձեզ վորքան կամենում եք, զբանով դուք չեք կարող խաբել գիտակից բանվորներին, վորոնք կադմակերպված են արդեն մեր զրոշակի տակ։ Դրանով դուք միայն ցույց եք տալիս, վոր ձեր շարքերում գտնվող, ձեր «աղգալին» կապանքներից դեռ չազատված բանվորները գիտակցութեան են գալիս և հարկադրում են ձեզ թեքվել մի փոքր դեպի ձախ և հարմարվել նրանց, վորպեսզի ձեռքից չզնսնան։

Ամեն անգամ, յերբ Ռուսաստանի բանվորները, կամ գլուղացիութեանը կամ զորքը մի ուժեղ ցնցումով տատանում են միապետի գահը, խեղճն ևեթ մանիֆեստներ են հայտարարում, վորտեղ կառավարութեանը զիջումներ և անում, սեփորմներ և տալիս նրանց և յերդվում միաժամանակ, վոր ինքը միշտ կողմնակից և յեղել ալդ սեփորմներին, վոր ինքը միշտ զբաղված և

յեղել իր հպատակների բարորութեան հոգսով։ Ծիշտ ալդպես և վարվում և Դաշնակցութեանը, ալդ հայոց ազգային բռնակալութեանը։ Բայց իդուր, ինչպես միապետութեան լուր «սեփորմները» վերջացնելով Պետական Դումայով՝ չեն կարող փրկել վայրենի միապետութեանը, այնպես ևլ ձեր «սոցիալիստական» փետուրները չեն կարող ծածկել վոչվորից ձեր տգեղ բուրժուական կերպարանքը, չեն կարող փրկել ձեզ անխուսափելի մահից, կազմալուծումից։

Յերբ ձեզ անվանում եք «պրոլետարիատի ղեկավարներ», դուք նմանում եք լեվրոպական անամոթ կղերականներին, կաթոլիկ հոգևորականութեանը, վոր միլիոնավոր բանվորներ գրավելով իրենց կուսակցութեան շարքերը՝ իրենց կեղծ հալրենասիրութեամբ և աստվածասիրութեամբ մոլորեցնում են նրանց, բթացնում նրանց դասակարգային գիտակցութեանը և բաժանում իրենց գիտակից ընկերներից, այն գիտակից ընկերներից, վոր կազմակերպված են ամեն տեղ Յեւլրոպայում միջազգային սոցիալ-դեմոկրատիայի դրոշակի տակ։ Դուք ավելի վատ եք ձեր կատարած դերով ալդ սեահոգի ու խաբերա կղերականներից, վարովհետեւ նրանք գոնե «հեղափոխական» և «սոցիալիստ» չեն անվանում իրենց և չեն գործում այնքան վալրենի միջոցներով իրենց հակառակորդների դեմ (բուսնցքով ու գենքով), ինչպես դուք։

Յերկու խոսք ել։ «Ալիքն» ուզում և հավատացնել իր ընթերցողներին, վոր հունիսի 22-ի փայլուն գործադուլի մեջ Դաշնակցութեանն ևլ մասն ունի, և մինչև իսկ ավելի շատ, քան սոցիալ-դեմոկրատիան, առաջին տեղը հիշելով Դաշնակցութեանը։ Այո, պա-

րոններ, мы пахали! (մենք եւ վարել ենք): Հաշտուած ենք, վոր այդ միանգամայն սուտ եւ թե ինիցիատիվը, թե ամբողջ գործադուլային կամպանիան, պատկանում եւ միմիայն մեր կազմակերպութեան: Դաշնակցութեանը հարկադրված եւ չեղել հետին թիվով միանալ գործադուլին:

1906 թ.

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵԶՄԻԱԾՆՈՒՄ.

Եջմիածնի ազգային «Հիմնադիր» ժողովը, վորի մասին այնքան աղմկում եր մեր ազգային բյուրոկրատիան, դարձավ վերջերս «Զանգի» մեջ—նույն բյուրոկրատների կամքով—հասարակ «կենտրոնական» ժողով—այն, ինչ վոր ուղում ելին, վոր նա լինի կաթողիկոսը եւ մշակականները: Այժմ այդ ժողովը դարձել ե արդեն **Դաշնակցության կուսակցական համագումարը:** Բոլոր վոչ դաշնակցական պատգամավորները բարվոք են համարել հեռանալ համագումարից, թողնելով ասպարեզը Դաշնակցության շլապավոր բաշխողուկներին:

Դժվար եր հնարել ավելի լավ միջոց՝ մերկացնելու դաշնակցականների կատարյալ քաղաքական սնանկութունը եւ պարզելու նրանց հակահեղափոխական եյութունը, քան այդ դժբախտ Եջմիածնի ժողովը: Դժվար եր չերեակալել ավելի խաչտառակ պարտութիւն, քան այն, վոր նրանք կրեցին այդ ժողովի հարցում, ընտրութիւնների ժամանակ եւ այլն:

Բայց վոգորմելիներն իրանք դեռ չեն հասկանում այդ բոլորը: Նրանք, ընդհակառակը, մինչեւ անդամ շատ շուքած են զգում իրանց, ըստ յերևութին, եւ վոգեւորվում են իրանց «փառավոր հաղթանակներով»: Այժմ, ֆալով մենակ «կենտրոնական ժողովում», այն

բոլոր մերկացումներինց հետո, վոր յեղան հաշվական մամուլի մեջ, նրանք չեն ամաչում դեռ ելի «ժողովրդական ուրինավոր ներկայացուցիչներ» հայտարարել իրանց և խոսել ամբողջ ազգի անունից:

Թե ինչու՞ն և կաշանում դաշնակցականների աչդ ճակատագրական ձեռնարկի հակահեղափոխական բնույթը, այդ մասին մենք շատ անգամ առիթ ենք ունեցել խոսելու, և դեռ ելի կխոսենք, յերբ մասնավանդ կողարդվին Եջմիածնի հանդուցյալ «կենտրոնական ժողովը», այժմ «դաշնակցական համագումարի» զբաղմունքի արդյունքները: Կանգ առնենք մի փոքր այն խնդրի վրա, թե ինչ տալացուցեցին մեզ այդ ընտրությունները և ընտրողական պայքարը:

Վոր Դաշնակցությունը քաղաքական-հեղափոխական կուսակցություն չե յեղել յերբեք, այլ յեղել և մի **Քիլանգոսիական** (մարգասիբական-բարեգործական բնկեռություն տաճկահայերի համար և վարձկան գիւղորհների ու բուրժուազիայի քիկնապահների մի բանակ ուսահայերի համար, այդ հայտնի յե ամենքին, բացի թերեւ միքանի ծայրահեղ միամիտներից, քաղաքական մանուկներից: Բայց վոր Դաշնակցությունը վոչ մի բարոյական հեղինակություն չունի նույնիսկ իր շարքերում գտնվող, իրան «դաշնակցական» անվանող մասսայի վերաբերմամբ, այդ դուցե հայտնի չեր շատերին: Այս ընտրությունները ցույց տվին, վոր Դաշնակցությունը նույնպիսի փրուն, արտաքուստ մեծ ու զորեղ մի **վոչնություն** և, ինչպեւ նշանավոր բյուրեղրատիան:

Իերենք մի փոքրիկ ուրինակ: Թիֆլիսն ունի 70 հազար հոգուց ավելի հայ ազգաբնակչություն: Յնթի

հաշվենք սովորական սովորը, նրանց 30 հազար հոգուց ավելին ընտրողներ են: Քանի՞ հոգի յեն մասնակցել Թիֆլիսի ընտրություններին այդ 30 հազարից: Հազիվ մի 500-600 հոգի: Բայց հաշվենք մի ամբողջ հազար: Այդ դեպքում մինչև իսկ ընտրություններին մասնակցածների թիվը կազմում և հազիվ բոլոր ընտրողների մի 3-4 տոկոսը:

Ահա թե վորպիսի «ժողովրդական ներկայացուցիչներ» են Թիֆլիսից գնացած պատգամավորները: Մենք հարցնում ենք, հանդուստյուն ու անամոթություն չե՞ արդյոք, վոր այդ ձևով կազմված «ներկայացուցիչների» ժողովը, այն ել պակասած իր անդամների մի մասով, հայտարարում և իրան «ազգային ներկայացուցչական ժողով»:

Միամիտներին մոլորեցնելու և խաբելու համար դաշնակցական շեֆերը հայտարարում են, վոր այդ **բնական** և, վոր յեվրոպական յերկրներում ել բոլոր ընտրողները չեն մասնակցում ընտրություններին և, այնուամենայնիվ, նրանց պարլամենտները ճանաչվում են, վորպեւ ներկայացուցչական հիմնարկություններ: Բավական և հիշել, վոր, որ, Գերմանիայում, վերջին ընտրությունների ժամանակ 12 միլիոն ընտրողներից մասնակցել են 9 միլիոնից ավելին, այսինքն ընտրողների 75 տոկոսը, վորպեսզի հասկանալ այդ անալոգիայի ամբողջ անհեթեթությունը: Միթե Դաշնակցության «թեորետիկները» չգիտեն այդ թվերը կամ չեն հասկանում, վոր այլ բան և ահագին մեծամասնություն (75 տոկոս) և այլ բան և ամենայնիք փոքրամասնություն (3-4 տոկոս):

Նրանք շատ մաքի տպիկարություն են ցույց

ավել մեզ, բայց այդքանը, համեմայն դեպք, նրանք անկասկած հասկանում են, ալո, հասկանում են, բայց նրանց հարկավոր է մի կերպ արդարանալ, և նրանք փորձում են մոլորեցնել, խաբել միամիտներին:

Նրանք ունեն և մի ուրիշ ավելի խայտառակ առարկություն մեր մերկացումների դեմ: Ի՞նչ արած, — ասում են նրանք փարիսեցիությունում, — հայ ժողովուրդը դեռ հասունացած չէ այդ տեսակ գործերի համար, նա անտարբեր է դեպի հասարակական խնդիրները... Վերադառի կեղծիք: Սրանից մի չերեք ամիս առաջ, չերեք թիֆլիսում տեղի ունեցած Պետական Դումայի ընտրությունները և վերջինից, վոր մեր ընկ. Ժորդանիան ստացել է 12 թե 11 հազար ձայն, Դաշնակցության որդան «Ալիքը», հաշվելով, վոր այդ կազմում է բոլոր ընտրողների 47 տոկոսը, ծաղրում էր սոցիալ-դեմոկրատիային: «Մարդ չեղած տեղը ֆուման էլ մարդ է», — ասում էր նա մեծամտությունում, կամ՝ «սույուն չեղած տեղը մուկն էլ առյուն է»:

Ժորդանիան ստացել է ձայների 47 տոկոսը, — գրում էր «Ալիքը». — չեթե մենք, առյուն-դաշնակցներս բոլոր չանեյինք Դումային և գնեյինք մեր թեկնածուին, նա կունենար բոլոր մնացած 53 տոկոսի ձայները և պարզ է, վոր մենք կհաղթեյինք: Այդ 53 տոկոսը (չեթե մենք չենք սխալվում, մոտ 15 հազար մարդ) «Ալիքի» հաշվով բոլորը դաշնակցականներ ելին: Յեթե ինկատի ունենանք այն սահմանափակումները, վոր գոյություն ունեյին Դումայի ընտրողների համար, և ամենից առաջ այն հանդամանքը, վոր կանաչք բուրբուլին ընտրելու իրավունք չունեյին, այն դեպքում պետք է ընդունենք, «Ալիքի» հաշվի համաձայն, վոր

թիֆլիսում առնվազն 30 հազար զիտակից դաշնակցականներ կալին, վորոնք բոլորտ ելին անում Պետական Դումային:

Ինչո՞վ բացատրել, ուրեմն, վոր այդ 30 հազար զիտակից դաշնակցականները հանկարծ այնքան անզիտակից և «անտարբեր» դարձան, վոր նրանցից հազիվ մի 500-600 հոգի միայն մասնակցեցին «Հիմնադիր ժողովի» ընտրություններին: Ինչո՞վ բացատրեմ, վոր գոռոզ «սույունը» հանկարծ այդքան խղճալի «մուկ» դարձավ:

Վերջան պերճախոս են այդ թվերը և այդ փաստերը: Վերջան դարհուրելի չէ այն կեղծիքն ու անբարոյականությունը, վոր մաքրություն ու առաքինություն գիմակի տակ բուռն են գրել դաշնակցական խմբադրամներում և բյուրոներում:

Զգվանք և անեծք «հեղափոխության» և «սոցիալիզմի» մեծ գաղափարներն արատավորող, շահագործող այդ գաճաճներին...

Յե՛վ այդ մարդիկ, նստած ալժամ եջմիածնում, իրենց կուսակցական համագումարում, չերեակայում են, վոր կարող են ալս անգամ ել խաբել հայ ժողովրդին և փաթաթել նրա վզին իրանց վորոշումները, հայտարարելով իրանց՝ ազգի հաբազատ ընտրչայներ և այդ վորոշումները՝ ազգի հավաքական կամքի արտահայտություն:

Զուր հույսեր, հարգելի բաշխողուկներ, հեղափոխական փարիսեցիներ ու ավանդույտներ:

Հայ ժողովուրդը և մանավանդ հայ պրոլետարիատն արդեն ճանաչում են ձեզ:

1906 թ.

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ.

Պատվիրակների ու պատգամավորների ընտրութ-
յուններն ազգային «Սահմանադիր ժողովի» համար
շարունակվում են: Հայ հասարակությունը, հայկական
կուսակցությունները, հայ մամուլն զբաղված են
այդ ընտրությունների խնդրով:

Ասպարեզի վրա մրցում, պայքարում են գլխա-
վորապես յերկու կուսակցություններ՝ դաշնակցական-
ները և մշակականները:

Ի՞նչ գաղափարների, ի՞նչ լոզունգների շուրջը և
ի՞նչ ձևերով և մղվում այդ պայքարը: Ի՞նչ տարրեր
խավերի, դասակարգերի ներկայացուցիչներն են այդ
կուսակցությունները: Հանուն ի՞նչ նպատակների, ի՞նչ
իդեալների յեն կոտրում նրանք իրենց նիզակները:

Խեղճ հայ հասարակություն, խեղճ հայ կուսա-
կցություններ: Կարելի չէր յերևակայել, վոր մի այս-
պիսի ժամանակ, հեղափոխական այս մեծ որերում, վոր
ապրում և Ռուսաստանը, նրա սահմաններում բնակ-
վող մի «կուլտուրական» ժողովուրդ կարող և այն առ-
աինձան հասարակական-քաղաքական ահասություն,
դադափարական խեղճություն և սնանկություն ներ-
կայացնել, վորքան այդ ցույց են տալիս ներկա ըն-
տրությունները:

14-15 տարի սրանից առաջ կաթուղիկոսական ըն-
տրությունների ժամանակ, յերբ մի կողմից կանգնած

էյին մշակականները, մյուս կողմից՝ նոր-դարական-
ները, նրանց բռնակռվի ու պայքարի մեջ ավելի հասա-
րակական իմաստ և գաղափարական բովանդակու-
թյուն կար, քան այժմյան այդ ընտրությունների
մեջ:

Վոչ մի իդեալ, վոչ մի լոզունգ չեք գտնի դուք
այն կատաղի կռվի մեջ, վոր մղում են միմյանց դեմ
կազեմ-ազատամիտ մշակականները և quasi-սոցիա-
լիստ դաշնակցականները: Պայքարը մղվում և բացար-
ձակապես միմիայն անձնավորությունների շուրջը, կը-
րում և զուտ թաշփայտական բնավորություն: Իսկ ինչ
վերաբերում և կռվի ձևերին, դա արդեն միանգամայն
սոսկալի ու ապշեցուցիչ է: Վոչ մի սրբություն չեն
ճանաչում մարդիկ. բռնություն, ծեծ, խաբդախություն-
ներ—ահա պայքարողների ամենահիմնական, ամե-
նահամոզեցուցիչ արգումենտները: Ինչ վերաբերում և
դաշնակցականների յենիչերիններին, նրանք գերադա-
նում են առաջ բանակալության զինվորներին ու վոս-
տիկաններին: Պետական Դումայի ընտրությունների
ժամանակ առևտական բանակալ բյուրոկրատիան այն-
քան ընդիմ էր գործ դրել, վորքան մեր ազգային
դաշնակցական բյուրոկրատիան գործադրում և այժմ:

Սոսկալի՜ վիճակ:

Յեւ այդ բոլորը տեղի ունի վոչ միայն գաղա-
սներում, յետ ընկած գյուղերում, այլև մեր յերևելի
«մայրաքաղաքներում» Թիֆլիսում, Բազմում:

Ի՞նչն և այդ բոլորի պատճառը:

Ամենից առաջ այն, վոր ազգային սահմանադիր
ժողովը «վերհից» տված, դաշնակցական բուռնցքի ու
խանջալի ծայրի միջոցով «խլված» մի հաստատություն

և եւ վոչ ժողովրդական պահանջի արդյունք, գիտակցված հասարակական կարիքի ծնունդ: Դրան ավելանում է այն, վոր յերկու պաշարորդ կուսակցությունները, չընայած իրանց այդ մասին ունեցած սուբյեկտիվ հակառակ կարծիքներին, միեւնույն հասարակական խավերի, միեւնույն դասակարգի ներկայացուցիչներն են եւ, հետեւապես, նրանց մեջ չի յել կարող հասարակական գաղափարական հոգի վրա վորեւ լուրջ պայքար մղովել: Մշակական եւ դրոշակական — դրանք, չնայած իրանց փոխադարձ հայեցողականներին, միեւնույն մեղալի յերկու կողմերն են, միեւնույն բուրժուազիայի հարազատ զավակները, այն միակ տարրերությամբ թերեւ, վոր նրանց մի մասը սիրահար է քնքուշ ժպիտների, մյուսը բուռնցքի ու վառողի:

10—15 տարիներ ընթացքում Դրոշակը յեղել է Մշակի արտասահմանյան հրատարակությունը: Առանց խանգարելու միմյանց, նրանք ծառայել են միեւնույն բուրժուական գործին՝ աշխատել են խեղդել կովկասահայերի մեջ ամեն մի հեղափոխական ինքնագործունեյություն եւ թունաւորել են հայ բանւորության հոգին ու գիտակցությունը: Այժմ նրանք յեկել են կանգնել միեւնույն հրապարակի վրա, եւ անձնական գրծով հաշիվներն ու թայֆայական ինտերեսները կովի լեն բռնեցրել նրանց, եւնիզակներ են, կեղտոտ ու բութ նիզակներ, վոր կոտրում են նրանք միմյանց դեմ...

Թե ինչ ոգուտ պետք է ստանա այդ բոլորից հայ ժողովուրդը, ինչ կարող է տալ նրան այդ ձեով ընտրված եւ աշխարհի տարրերից կազմված «Սահմանադիր ժողովը», այդ դժվար չի գուշակել:

Դաշնակցական բուռնցքը ուզում է թագաւորել

հայկական կյանքում, հաստատել ամեն տեղ իր զինվորական զիկտատուրան, ձեռք գցել բոլոր ազգային հիմնականությունները, ստեղծել իր արքայականների համար չաղ-չաղ պաշտոններ: Այդ բոլորն, անկասկած, կարող է հաջողվել նրան, մենք հավատում ենք:

Բայց... յերեւակայեցեք, ընթերցող, յերբեք մենք այնքան լավատես չենք յեղել սոցիալ-դեմոկրատիայի ապագայի վերաբերմամբ հայ իրականության մեջ, յերբեք այնքան թույլ չի յեղել մեր «հան» դաշնակցականների «հաղթանակների» հանդեպ, վորքան ներկայումս: Մի կողմից այդ բոլորը, ինչ վոր մենք տեսնում ենք այս ընտրությունների մեջ, եւ այն դերը, վոր պետք է կատարե Դաշնակցությունն իր զիկտատուրայի ժամանակ, եւ մյուս կողմից հայ բանւորության արթնացող դասակարգային ինքնագիտակցությունը, այն մեծ պոտենցիալ ուժը, վոր կուտակվել է նրա մեջ, ամենալավ գրավականներն են գոռոզ Դաշնակցության մոտալուտ ու խայտառակ պարտության:

Զինվորական զիկտատուրան վերջին խոսքն է լինելու մեռնող միապետական բյուրոկրատիայի, նույն այդ զինվորական զիկտատուրան վերջին խոսքը կլինի եւ մեր ազգային դաշնակցական բյուրոկրատիայի:

Ս. Շահումյան

(Խմբագրական)

«Կայծ» № 45, 1906 թ. 2 սոստատի

«ԶՈՐՔԸ ԶԵԶՈՔ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ».

«Մշակը» մի հեաաքքեր հայտնություն եր արել այս քանի որս զինվորական այն զիկտատուրայի մասին, վոր հաստատել և հայկական կյանքում Դաշնակցությունը: «Զորքը գործ չունի ներքին թշնամու հետ—ասում և նա,—ինքնապաշտպանության համար ստեղծված զինվորական կազմակերպությունը (խմա Դաշնակցությունը) չպետք և խառնվի մեր հասարակական գործերի մեջ, չպետք և թեկադրի մեզ իր կամքը»... Դրանք շատ հին և շատ ծանոթ խոսքեր են, ընթերցող. «գորքը չպետք և մասնակցի քաղաքականության» այդ աղաղակում են այժմ շատ հաճախ միապետության հավատարիմ ծառաները, աղաղակում են ամեն անգամ, յերբ գորքն այս կամ այն կերպ արտահայտում և իր համակրանքը Ռուսաստանի ազատագրական շարժման, յերբ նա դադարում և կույր գործիք լինելուց բռնակալության ձեռքին: Զորքը գոյություն ունի միայն արաաքին թշնամու դեմ կռվելու համար, իսկ ներքին կյանքում նա մի չեզոք ուժ և հավատացնում են նրանք:

Ինչի՞ վրա յեն հիմնում իրանց ուժն, իրանց շահագործությունն իշխող դասակարգերը բոլոր ժամանակակից պետությունների մեջ, ինչո՞վ են նրանք սարսափի և հնազանդության մեջ պահում ժողովրդական հալածվող և հարստահարվող մասսաները, ուժ միջոցով

և բնութագրված ամեն տեղ խեղդում պրոլետարիատի ազատագրական շարժումը, խանգարում նրանց դասակարգային կռիվը, հրաքանդարկ անում գործադուլ անող բանվորներին և այլն:

Ո՞վ և կանգնած այն բուլեյին Ռուսաստանի հարյուր-միլիոնավոր՝ ազատության ձգտող ժողովրդի առաջ, ո՞վ և գետերով հոսեցնում ըմբոսն բանվորների ու գյուղացիների արյունը, ուժ վրա չեն վում ամբողջովին ինքնակալական ռեակցիան...

Վոչ գորքը միշտ չեզոք ուժ է, գորքը հեռու չեն քաղաքականությունից, — հավատացնում են բոլոր յերկրներին բռնակալները, ժողովրդի դահիճները, իշխող դասակարգերը:

Յեւ այդ անամոթ սուտը, այդ վոճրագործ սուտը կրկնում և այսօր ազատամիտ «Մշակը». Դաշնակցությունը չպետք և խառնվի հասարակական գործերի մեջ. նա կոչված և ծառայելու միայն «ինքնապաշտպանության» «սուրբ գործին», Դաշնակցության «զինվորները» ներքին թշնամի չպետք և ճանաչեն:

Այս, դուք, կեղծավոր ու խարդախ բուրժուաներ: Դաշնակցությունը համարձակվել և դիպչել ձեր քմքին, նա համարձակվել և «դավաճանել», կամ թվում է, թե «դավաճանում» և ձեզ, և դուք արդեն վաչնասուն եք բարձրացրել, դուք արդեն աղաղակում եք, վոր «գորքը պետք և չեզոք լինի»:

«Չեզոք» եր հայ «գորքը», յերբ իր ամբողջ ուժն ու ազդեցությունը գործ եր դնում, վորպեսզի տաճկահայկական դատով զրադեցնի ռուսահայ ժողովրդական մաս-

սաները, յերբ նա «ուժերի ջլատումն» և «հայրենիքի դաժանութիւնն» եր հայտարարում հայ պրոլետարիատի կռիւլը հայ բուրժուազիայի և ուսւ բռնակալութեան դեմ, յերբ իր զինված հրոսակներով մարտիների ոգնութեամբ ցրվում եր գործադուլի համար հավաքվող հայ քանվորներին, յերբ մահվան սպանալիքով նա արգելում եր ամեն տեղ հայ գաղառներում սոցիալիստական պրոպագանդան: Հարցնում ենք ձեզ. այն ժամանակ չեղո՞ք եր հայկական «գործը»: Ապա ինչո՞ւ այն ժամանակ դուք չեյիք բողոքում բռնութիւնների դեմ, չեյիք ասում, վոր զինվորները «չպետք և խառնվեն ներքին գործերի մեջ, չպետք և թելադրեն մեզ իրանց կամքը»... Ինչո՞ւ:

Վորովհետեւ դուք շատ բանիմաց, շատ առողջ բնազդներով ոժտված բուրժուաներ եք, վորովհետեւ դուք լավ գիտեք, —ինչպես ասում են ուսանիւրը,—где раки зимуют.

Իսկ այժմ, տեսեք թե ի՞նչ և պատահել, ի՞նչ դարհուրելի բան. Բալանթարների, Հաջի Համբարձումների փոխարեն ընտրվում են «ազգային ժողովի» համար Թոփչյան կամ Ահարոնյան տիրացուները... Վերալիսի դժբախտութիւն «հայ ազգի» համար: Յեւ Նրանք ընտրվում են թեւ Բալանթարներին ել ըստ ամենայնի պատկանող, բայց այսօր Թոփչյանների անմիջական հրամանատարութեան տակ գտնվող «գործի» ողնութեամբ:

Հետևապէս—գործը «դադարել և» «չեղո՞ք» ուժ իրնելուց: Մինչև այժմ նա «չեղո՞ք» եր, սրբութեամբ կատարում եր իր պարտականութիւնները, և դուք հար-

գում ելիք Նրան զբա համար, բայց այժմ նա խախտում և չեղոթութեան սկզբունքը, այժմ նա դավաճանում և իր «վեհ կոչմանը», խառնվում և քաղաքականութեան մեջ:

Կրկին անգամ ասում ենք ձեզ. ախ, դուք, կեղծավոր ու խարդախ բուրժուաներ:

Ս.

«Կայծ» № 46, 1906 թ. 4 սղոստոսի

ԻՆՏԵԼԼԻԳԵՆՑԻԱՆ ՅԵՎ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԸ.

Ժամանակակից ինտելիգենցիայի հասարակական
գերը.

1.

Ընդունված կարծիք է, թե ինտելիգենցիան «յեր-
կրի աղան» է, թե նա առաջադիմական ուժ է ամեն
մի հասարակության մեջ: Այդ կարծիքը կարող է
խիստ սահմանափակումների ու վերապահումների: Յե-
թե վերցնենք, որինակ, ներկայիս հայ ինտելիգեն-
ցիան է մի շարք ուրիշ ազգային ինտելիգենցիաներ,
մենք կտանենք, վոր նրանք վոչ միայն առաջադիմա-
կան ուժեր չեն, այլ, ընդհակառակը, շատ սպեղ ու
փնասակար դեր են կատարում իրենց ժողովուրդների
առաջադիմության գործում:

Այո, յեղեկ է ժամանակ, վոր ինտելիգենցիան
ուգտակար դեր է կատարել յեվրոպական ժողովուրդների
կյանքում: Ֆրանսիական մեծ հեղափոխություն շրջանի
հռչակավոր «լուսավորիչները» կամ «հնցիկլոպեդիստ-
ները» — Ռուսոս, Վոլտեր, Հելվեցիուս, Հոլբախ, Լամարտի
և նրանց շուրջը խմբված ինտելիգենցիան, կամ 1848
թվականի «Յերիտասարդ Գերմանիան» — Բյորնեյի,
Հաչնեյի, Գուցկովի, Հերվեգի, Ֆրեյլիգրատի փալուն
սերունդը, Մաձինիի գրոշի տակ գործող իրիպախ «Յե-
րիտասարդ Իտալիան» և այլն — դրանք, այո, հսկայա-
կան առաջադիմական գործ են կատարել իրենց ժա-

մանակին: Դրանք են յեղեկ այն առաջավոր գնդերը,
վոր իրենց համարձակ գաղափարական կուլով միջնա-
դարյան ֆեոդալական ու կղերական մութ աշխարհա-
յեցողությունն ու նախապաշարմունքների դեմ՝ նախա-
պատրաստել են առաջադեմ բուրժուազիայի տիրապե-
տությունը և նոր ու հարուստ կուլտուրայի ծաղկումն
ու զարգացումը XIX դարում: Դրանք են յեղեկ, վոր—
լստ հայտնի արտահայտություն— իրենց «քննադատա-
կան զենքով» հնարավոր են դարձրել գալիք «զինքի
քննադատություն» հաղթությունը:

Յերբ բուրժուական իր որչեկտիվ պատմական
զրույթյամբ յեղեկ է առաջադեմ դասակարգ, առաջադեմ
և յեղեկ և նրա ինտելիգենցիան: Այժմ, ընդհակա-
ռակը, ամեն տեղ Յեվրոպայում բուրժուական ինտել-
իգենցիան իր ամբողջ հասարակական աշխարհայացքով
ու գործունեությամբ մի վիթխարի խոչընդոտ է ժողո-
վուրդների առաջադիմության համար: Իր ամբողջ գա-
ղափարական ուժը նա ծառայեցնում է այսոր բուր-
ժուազիայի շահերին, նա ամեն ջանք գործ է դնում—
գիտակցաբար և անգիտակցաբար— կեղծելու հասարա-
կական գիտությունը, հասարակական ճշմարտություն-
ները, մթագնելու ժողովրդական մասսաների գիտա-
կությունը, արդարացիելու նրանց առաջ՝ դանադան
աչքակապությունների ու խաբեբայության միջոցով՝
շահագործության ու բռնության վրա հիմնված այժը-
մյան հասարակակարգը: Ել չենք խոսում այն մասին,
վոր իր գործնական գիտություններով— քիմիայով,
տեխնիկայով և այլն— բուրժուական ինտելիգենցիան
ծառայում է այժմ միմիայն իշխող դասակարգերի
հարստացմանը:

Բայց բոլոր յեկրտական չերկրներում մենք տեսնում ենք աչտոր և մի ուրիշ ինտելլիգենցիա, վոր կանգնած և հակառակ բանակում և հնչեցնում է նոր հասարակական վարդապետութեան քարոզը: Այդ ինտելլիգենցիան—համեմատորեն շատ փոքրաթիվ դժբախտաբար,—ինարկե, առաջադիմական ուժ է: Վոչընչացնո՞ւ քննադատութեան յենթարկելով բուրժուական հասարակական գիտութեանները—քաղաքատնտեսութեանը, պատմագիտութեանը, փիլիսոփայութեանը—և գիտակցութեան բերելով իրենց շահերի նկատմամբ բանվորական մասսաները, այդ ինտելլիգենցիան մի խոշոր առաջադիմական գործ և կատարում, վոր չերեք չի մոռացվելու պատմութեան մեջ:

Ներկա պատերազմի որերում այդ ինտելլիգենցիան ծանր փորձութեան յենթարկվեց և մեծ ճեղքեր տվեց իր աշխարհայացքի ու գործունեություն մեջ: Բուրժուական շրջաններից դուրս յեկած և շնորհիվ մի կողմից, իրենց անկեղծ ու անձնվեր գործունեություն հոգուտ պրոլետարիատի և, մյուս կողմից, շնորհիվ իրենց կրթութեան ու բարձր դիրքի պարլամենտներում կամ գիտութեան մեջ, —այդ ինտելլիգենցիայից շատերը ղեկավարող զեր և չին կատարում բանվորական կուսակցությունների մեջ: Վճռական ժամին նըրանք չերևան հանեցին իրենց բուրժուական բնույթը և դավաճանեցին միջազգայնութեան բարձր գաղափարին, վոր ամենաթանգարժեք բարիքն և պրոլետարիատի համար: Այդ հանգամանքը մեծ չարախնդութեան առաջացրեց բուրժուական ժողովրդի շարքերում և վորոշ լքումն ու հուսախաբութեան—ժողովրդական լայն մասսաներում: Բայց թե հենց այդ խելա-

դար չարախնդութեանը և թե, մյուս կողմից, լքումն ու հուսախաբութեանը, վոր բարեբախտաբար սկսում են անցնել, ամեն ժամ և ամեն րոպե, այս չերկուտարվա ընթացքում պերճախոս կերպով վկայում եյին, վոր, այճուամեհայճիվ, տառապող մարդկության միակ հույսը միջազգային գիտակից աշխատավորությունն է, միակ առաջադիմական գաղափարական ուժը—նրա ինտելլիգենցիան, հետեղական ընկերավարականները:

Մյուս կողմից, չերեք բուրժուական ինտելլիգենցիան չի ցուցադրել այնքան պարզ կերպով իր հասարակական մտավոր և բարոյական սնանկությունը, չի պարզել այնպիսի ցինիկ անկեղծութեամբ իր հակաժողովրդական, հակակուլտուրական դեմքը, ինչպես ներկա պատերազմի ժամանակ: Բավական և հիշել միայն ամբողջ աշխարհի բուրժուական մամուլի ու պարլամենտական գործիչների կատարած դերն այս չերկուտարվա ընթացքում:

II.

Պրոլետարիատի դրոշի տակ մտած ինտելլիգենցիան կազմում է, ինարկե, ինչպես նկատեցինք վերև, համեմատաբար աննշան մասը և այդ պրոլետարիատ «մտավոր պրոլետարիատն» է, այսինքն՝ ինտելլիգենցիայի այն չուսնոր խավերը, վորոնք ծառայում են կապիտալիստական բնավորություն կրող գրական, հրատարակչական, բանկային և այլ ձևոնարկությունների մեջ և շահագործվում են կապիտալի կողմից նույնպես, ինչպես և պրոլետարիատի այլ խավերը: Իսկ իր ահագին մեծամասնությամբ ինտելլիգենցիան—ինժեներներ, փաստաբաններ, դատավորներ, բժիշկ-

ներ, ռուսացիներ, պրոդներ, ղերասաններ և այլն—
զրանք համարյա բոլորը գտնվում են բուրժուազիայի
բանակում և սպասավորում են իշխող զանակարգերին։
Յեւթ այդ շատ հատկանալի չե նախ և առաջ զրանք
մեծ մասամբ բուրժուական ընտանիքների ու միջա-
վայրի ծնունդ են և ապա, բացի զրանից, իրենց անմի-
ջական պրոֆեսսիոնալ շահերով ամբողջովին կապված
են բուրժուազիայի հետ։

Հայտնի չե, վոր բուրժուական իդեոլոգիայի հա-
կանիշներից մեկը և նրա անհրաժեշտ բաղկացուցիչ
տարրը կազմում և **ճացիոնալիզմը**։ XVIII դարի վերջե-
րում Գերմանիան բաղկացած էր մոտ 300 մանր ու
անկախ իշխանութիւններից, նուսէքան փոքրիկ թա-
ղիկներով, անհամար մաքսային պատնէշներով, ալան-
թալաններով և այլն։

Բուրժուազիան կոչված էր միացնելու այդ հարյուրա-
վոր բաժանված և յերկպառակութիւնների մեջ խեղդ-
վող մանր իշխանութիւնները և ստեղծելու մի ամ-
բողջական ազգային «խաղաղացրած միջավայր», լայն
ազգային շուկա, ուժեղ «**ազգային պետութիւն**»։ Այդ
պետութիւնը, մենք գիտենք, վոր նա ստեղծեց վերջ-
նականապես Բիսմարկի որով։ Նույն ազգային «կոն-
սոլիդացիան» կատարվեց Իտալիայում. այնտեղ ել XIX
դարի ընթացքում բազմաթիւ պետութիւններից,
վորոնց մի մասը գտնվում էր Ալպտրիայի իշխանու-
թյան ներքո, առաջացաւ աշխարհի ազգային պետու-
թիւն Իտալիան։ Նույն պատմական գործը կատարել
էին ավելի շուտ Ֆրանսիական ու անգլիական բուր-
ժուաները, ստեղծելով նույնպես բազմաթիւ մանր
ֆեոդալական իշխանութիւններից մի-մի ուժեղ ազ-

գային պետութիւն։ Հանուն ազգային գաղափարի
ազգային պետութիւն, XIX դարի ընթացքում տեղի
ունեցան և մի շարք ուրիշ պատմական շարժումներ,
հեղափոխութիւններ և պատերազմներ, փոխեց համա-
րյա բոլորն ազատագրական և առաջադիմական նշա-
նակութիւն ունեցին։

Նացիոնալիզմը և լիբերալիզմը անբաժան կերպով
կապված են միմյանց հետ։ Ինչպես անհատական սեփա-
կանութիւնը և անհատական մրցումը պետութիւն ներ-
սում, նույնպես և ազգային սեփականութիւնը — մար-
մնացած ազգային պետութիւնների մեջ, և այդ
պետութիւնների մրցումը համաշխարհային շու-
կայում, — միևնույն բուրժուական հասարա-
կության յերկու անբաժան կողմերն են։ Լիբերա-
լիզմից առաջ բուրժուազիան ապրել և զեմոկրատիզմի
շրջանը, աշխարհում ապրում և իմպերիալիզմի շրջանը,
վոր բուրժուազիայի տիրապետութիւն վերջին շրջանն
է. **ճացիոնալ-զեմոկրատիզմ**, ապա **ճացիոնալ-
լիբերալիզմ** և աշխարհում **ճացիոնալ-իմպերիալիզմ**։ Նացիո-
նալիզմը յերկու և և կա, այն տարբերութիւնով միայն,
վոր նախկին առաջադիմական ու հեղափոխական նա-
ցիոնալիզմը դարձել և աշխարհում մի ծայրահեղ հետադիմա-
կան իդեոլոգիա։ Բացի այդ՝ նացիոնալիզմը, հասնելով
իմպերիալիզմի շրջանում իր գագաթնակետին, միաժա-
մանակ հենց իմպերիալիզմի մեջ բացասում և ինքն
իրեն։ Պատմութիւն այդ կենդանի դիալեկտիկան հաս-
կանալու համար վերին աստիճանի հարուստ ու հետա-
քրքիր նյութ և տալիս ներկա համաշխարհային պա-
տերազմը։

Նացիոնալիզմը նույնպես «իմամանետ» և բուր-

ժուռական աշխարհայացքին և բուրժուական պրակտիկային, ինչպես ինտերնացիոնալիզմը—նոր ընկերվարական աշխարհայացքին: Ով չի հասկացել այդ, ով կարծում է, վոր կարելի չի ժխտել լիբերալիզմը, իմպերիալիզմը, բայց պահպանել նացիոնալիզմը, ով խոսում է «առողջ» և «անառողջ» նացիոնալիզմի մասին և փորձում է զանազան սոփեստութուններով հաշտեցնել նացիոնալիզմը ինտերնացիոնալիզմի և առհասարակ ընկերվարական նոր աշխարհայացքի հետ, նա վռչինչ չի հասկացել վոչ լիբերալիզմից և վոչ էլ այդ նոր աշխարհայացքից:

Նացիոնալիզմի (ինչպես և առհասարակ ամբողջ բուրժուական իդեոլոգիայի) կրողը և քարոզիչն ինտելիգենցիան է: Բայց պետք է ասել, վոր հատկապես նացիոնալիզմի նկատմամբ ինտելիգենցիան հաճախ «ավելի արքայական է, քան արքան ինքը»: Իր նացիոնալիզմի մեջ նա շատ անգամ, յեթե վոչ միշտ, ավելի հեռու չէ գնացել, քան այդ հարկավոր է յեղել բուրժուական հասարակության շահերի տեսակետից: Յեվ քանի գնում, ինտելիգենտական նացիոնալիզմն այնքան ավելի ուժեղանում է և վտանգավոր դառնում ժողովուրդների առաջադիմության տեսակետից: Նա առանձնապես ցավալի ու սպառնական ձևեր է ընդունում այն մանր ու հետամնաց ազգերի մեջ, վորտեղ չկա ուժեղ արդյունաբերական բուրժուազիա, վորպեսզի վերջինս կարողանար սանձահարել իր «գաղտնավարխոտներին» և չափավորել նրանց նացիոնալիստական յեռանդը:

Ինտելիգենցիայի այդ ծայրահեղ բացասական դերը բացատրվում է այն ինքնահատուկ պայման-

ներով, վորոնց մեջ նա գտնվում է, վորպես մի առանձին բուրժուական խավ: Այդ դերը թելադրում են նրան իր պրոֆեսիոնալ, անմիջական տնտեսական շահերը:

Տեսնենք՝ վորոնք են այդ պայմանները և այդ շահերը:

III.

Ինտելիգենցիայի գոյության աղբյուրը մտավոր աշխատանքն է. նրա գործունեության գլխավոր զենքն է լեզուն և խոսքը:

Լեզուն, վորպես խոսակցության ու հասարակական հարաբերությունների միջոց, կենսական անհրաժեշտություն է, իհարկե, բոլոր դասակարգերի և ամեն մի մարդու համար, բայց ինտելիգենցիայի համար նա բացի այդ **պրաճեստիա լե, առհես է**: Գերմանացիք ինտելիգենտին անվանում են Wortführer կամ Spracharbeiter, վոր հայերեն կարելի չէ թարգմանել «խոսքի աշխատավոր» բառով:

Բայց խոսքը, լեզուն լինում են միշտ **ազգային**: Ընդհանուր լեզու ժամանակի ընթացքում կարող է մշակվել քաղաքակիրթ յերկրներում, հետո գուցե և ամբողջ յերկրագնդի վրա, դա այնքան էլ ուսույլական չէ, ինչպես թվում է շատերին: Բայց այսօր ամեն մի ժողովուրդ և ամեն մի ինտելիգենցիա խոսում է մի վորեկ ազգային լեզվով: Յեվ ամեն մի ինտելիգենցիա խոսիլ և առանձնապես շահագրգռված է, վոր իր ազգային լեզուն ամուր պահպանվի և վորքան կարելի չէ լայն տարածվի:

Ավստրիական մարքսիստ Յոսիֆ Շարասսերն «Խնտերնացիոնալիզմը» վերնագրով իր մի հոդվածի մեջ գրում է հետևյալ տողերը.—

«Չեխական և ավստրիական բուրժուական կուսակցությունների հակամարտությունը այլ կերպարանք է կրում, քան, որինակ, Անգլիայի ու Գերմանիայի հակամարտությունը: Նա բղխում է ազգային ինտելիգենցիայի մրցումից, վորոնց աշխատանքի պրոցեսում լեզուն «արտագրություն միջոցներին» դեր է կատարում: Ամեն մի ազգային ինտելիգենցիա ձգտում է վորքան կարելի չէ շատ պաշտոններ, ծառայություն շատ տեղեր ձևաք բերել «իր ազգի համար»:

«Արտագրության միջոց» անտեսադիտական տերմինը շատ վորոշիչ ու լուսարանող է ներկա դեպքում: Յեվ իսկապես, փոխեցեք ինտելիգենտի ազգային միջավայրը, և դուք կտեսնեք, վոր նա ավելի անուղիական է, քան հողից զրկված հողագործը կամ իր գործիքներից զրկված արհեստավորը: Յեվ այն բանը — թե ազգային կոիմներն Ավստրիայում, վոր այնքան վնասակար են ժողովուրդների առաջադիմության համար, հետևանք են նացիոնալիստական ինտելիգենցիաների կատաղի մրցման — այդ միևնույն բանը ձշտում ու պնդում են Ավստրիայի հարաբերությունների բոլոր ուսումնասիրողները: Ազգերի մերձեցման և խաղաղ կուլտուրական դարձացման զլխավոր խոչընդոտն ինտելիգենցիայի թունավոր նացիոնալիզմն է: Գերման ինտելիգենցիան Ավստրիայում աշխատում է արքայազնի դարձնել գերմանական լեզուն և ապահովել իր համար վորքան կարելի չէ շատ պաշտոններ՝ ուսուցիչներին, դատավորներին, պետական ու մունի-

ցիալայ ծառայողներին և այլն: Այդ սպառնում է չեխ, լեհացի և սուս ինտելիգենցիաներին կենսական շահերին և կատաղի դիմադրություն ու հակառակ ձգտումն է առաջ բերում նրանց կողմից: Յեվ ցավալին այն է, վոր նրանք կարողանում են քաշել իրենց յետևից ժողովրդական մասսաները և վարակել նրանց ազգային վոխազարձ ատելությունը:

Իհարկե, լեզվական հալածանքը կարող է յերբեվիցե սպառնական չափեր ընդունել և պրոլետարիատի համար, բայց նախ՝ նա այդ չափերը չի ընդունել յերբեք Ավստրիայում և ապա՝ յեթե ընդունել իսկ, դարձյալ նացիոնալիզմը վոչ միայն չէր ոգնի, այլ ընդհակառակը, կվնասեր բանվորական և այլ ժողովրդական մասսաներին, վորոնց շահը — մանավանդ Ավստրիայի նման մի յերկրում — պահանջում է ամենից առաջ միջազգային համերաշխություն ու մերձեցում և վոչ ազգային կոիմ:

Յերբ Անգլիան տարածում էր աշխարհի չորս կողմն իր տիրապետությունը, անգլիական ինտելիգենցիայի համար բացվում էլին գրավիչ հեռանկարներ՝ չաղ պաշտոններ ու փայլուն կարյերա նվաճած ընդարձակ գաղութներում: Յերբ Գերմանիան համաշխարհային շուկայում իր մրցումով սկսեց նեղել Անգլիային, այդ բանից ուռածում էլին վոչ միայն անգլիական վաճառականն ու արդյունաբերողը, այլև անգլիական ինտելիգենցիան: Անգլիական լեզվի ու ինտելիգենցիայի տեղն սկսում էլին բռնել գերմանական լեզուն և գերմանական ինտելիգենցիան: Բայց պետությունների մեջ նացիոնալիզմն ավելի լայն դատակարգային — պոստմական արմատներ ունի: Դա վոչ թե զուտ

ինտելլիգենտական պրոֆեսսիոնալ նաղխոնալիզմն և, այլ նաղխոնալ-իմպերիալիզմ: Այս վերջինը, ինչ տակ կուզի, ավելի մտանգալոր չափեր ու արտահայտութեաններ ունի. նա ստրկացնում ու կեղեքում է հետա-մնաց յերկրներին, գաղութների աղգարնակութեանը, ճշնում ու բռնի ուժով խեղդում է ամեն մի գիմա-զրութեան բանվորական մասսաների կողմից—հանուն «հայրենիքի» շահերի և բերում է վերջապես դեպի այն զարհուրելի ընդհարումներն աղգերի մեջ, վորոնց մենք ականատես ենք այսօր:

Այստեղ էլ, իհարկե, իմպերիալիստական պրո-պագանդի գործում՝ բուրժուական ինտելլիգենցիան վերին աստիճանի բացասական ու ֆուսսակար դեր է կատարում, բայց մեզ զբաղեցնողը ներկա հոգիածում նաղխոնալ-իմպերիալիզմը չէ ընդհանրապես, այլ միայն զուտ ինտելլիգենտական իմբալան նաղխո-նալիզմը, վորն իր ավերիչ աղգեցութեանը գործում է ավելի հետամնաց ու մանր աղգերի մեջ:

Վերև բերած ավատրիական որինակից վոչ պակաս բնորոշ է այդ կողմից բալկանյան ինտելլիգենցիայի դերը: Բալկանյան աղգերի գժրախտութեանը կայա-նում է նրանում, վոր նրանք չկարողացան միանալ և կազմել մի ուժեղ ֆեդերատիվ պետութեան, վոր պատմական անհրաժեշտութեան էր այդ աղգերի հա-մար: Միմիայն բալկանյան ֆեդերացիաներ, վոր կա-րող էր գուրս բերել այդ փոքրիկ պետութեաններն իրենց անողնական վիճակից, աղատել նրանց հարևան մեծ պետութեանների ձեռքին շահագործման առարկա և խաղալիք լինելուց և թնտեսական ու կուլտուրական զարգացման դուռը բացել այդ ժողովուրդների առաջ:

Իհնչն էր պատճառը, վոր այդ ֆեդերացիան չհաջողվեց, և «բալկանյան կրիզիսն» ստացավ իր լուծման այժմյան զարհուրելի ձևը:

Այդ խնդրին նվիրված հարուստ գիտական հրա-տարակութեանը ցույց է տալիս յերկու ուժեր, վորոնց վրա և ամենից առաջ ընկնում է ծանր պատմական պատասխանատվութեանը: Դա մի կողմից՝ բալկանյան **գիմաստիաճեքն** են, մյուս կողմից՝ բալկանյան աղ-գային **իմսելիգեճեքները**: Մոտ 80—90 տոկոս կազ-մող պուղացիութեանը և նրանց կողքին բալկանյան ագրարիները, շնորհիվ այդ պետութեանների թուլու-թեան և աշխարհից կտրված լինելուն, այնպիսի անել գրութեան մեջ ելին, վոր նրանց համար հրամայական անհրաժեշտութեան էր՝ կամ ֆեդերատիվ բալկանյան պետութեան կազմել կամ յենթարկվել Ավստրիային: Նույնիսկ այս վերջինը փրկութեան և յերջանկու-թեան կլինեք նրանց համար, համեմատելով նրանց «անկախ» գոյութեան հետ:

Բայց ինչ էր սպասում բալկանյան գինաստիա-նեքին, յեթե ֆեդերացիան հաջողվեք: Նրանք կամ բո-լորը պետք է վոչնչանային, կամ նրանցից մեկը պետք է կատարեք Պրուսիայի թագավորների դերը գերմա-նական ֆեդերացիայի մեջ: Յեվ այդ էր, վոր բնակա-նորեն առաջ էր բերում կատաղի մրցումն բալկանյան գինաստիաների մեջ:

Նույն մրցումը տեղի ունեք և բալկանյան գա-նադան ժողովուրդների ինտելլիգենցիաների մեջ, վո-րոնք, իհարկե, հանգիս ելին գալիս հանոն «հայրենի-քի», հանուն «աղգասիրութեան»: Բուլղարական ինտել-լիգենցիան յերազում էր «Մեծ Բուլղարիայի» մասին,

սերբիականը՝ «Մեծ Սերբիայի», հունական ինտելլիգենցիան հիշում էր Հելլադայի հին փառքը և զառանցում «Նոր Բյուզանդիոնի» մասին, վորի մայրաքաղաքը պիտի լիներ, իհարկե, Կոստանդնուպոլիսը:

Յեվ այդ ինտելլիգենցիաներին հաջողվեց, շնորհիվ մի շարք արտաքին զորավոր պատճառների և շնորհիվ բալկանյան գյուղացիական մասսաների ծայրահեղ ագիտության, վարակել այդ մասսաները կեղծ «ազգային» իդեալներով և կատաղի փոխադարձ ատելություններշնչել նրանց: Դրա այնքան ցավալի ու կորստաբեր հետևանքները մենք տեսանք 1912 թվին բալկանյան պատերազմում և ահա այսօրվա համաշխարհային արյունահեղության ժամանակ:

Մի ուրիշ որինակ էլ ներկայացնում է իտալական իրրեգենտիզմը Ալստրիայում: Իտալական ընկերավարականների գրականությունից հայտնի չե, վոր Տրիեստի ու Իստրիայի (վոմանց կարծիքով նաև Տրիենտի) իտալական «հայրենասիրությունը» նույնպես հակաժողովրդական շարժում է:

Այսպես, որինակ, Սալվեմինին գրում է. «Իստրիայում իտալացիները կազմում են ազգաբնակչության հազիվ 40 տոկոսը: Այստեղ, ինչպես և Տրիեստում, պրոլետարական տարրը կազմում են սլավոնները, վորոնց ամենաամսմով կերպով շահագործում են իտալացի բուրժուաները: Այդպիսի դասակարգային հակառակությունն ավելի սուր կերպարանք է տալիս ազգային հակամարտության: Միայն սոցիալիզմն է, վոր միացնելով իտալացիներին ու սլավոններին մի կազմակերպության մեջ՝ գնում է վերացնել ազգային թշնամությունը...»:

Յեվ Սալվեմինիի տեսլով, միայն սլավոն բանվորների շահերին չե, վոր միանգամայն հակասում է իրրեգենտիզմը: «Իստրիայի ու Տրիեստի իտալական ծագում ունեցող բուրժուազիայի շահերն, ասում է նա, պահանջում են, վոր այդ վայրերը միացած մնան Ալստրիայի հետ: Այդ պատճառով մենք գտնում ենք, վոր ամբողջ իրրեգենտիզմը մի իլլյուզիա չե, զառանցանք: Միակ իրրեգենտիստական տարրը Տրիեստում և Իստրիայում մանր բուրժուազիայի վորոշ խավերն են և ամենից առաջ ինտելլիգենցիան, վորն իր լեզվով, կուլտուրայով և ավանդություններով իտալացի չե զգում իրեն»*):

Այդ մանր-բուրժուական, քաղաքական ինտելլիգենցիան էր, վոր իր իտալական «լեզվական» շահերը քողարկում էր կեղծ «ազգասիրական» ֆրազներով և իտալական կառավարությանը միշտ կոչ էր անում՝ ավստրիական լծից ազատել Իստրիայի ու Տրիեստի «չեղբայրակիցներին»...

Նման որինակների թիվը կարելի չէր յերկարել: Ժիշտ միեւնույն ինտելլիգենտական ու օկակցիոն բնույթ ունի և Ռուսաստանի հրեական**), վրոցական նացիոնալիզմը: Հարցը յերբեմն բարդվում է նրանով, վոր ինտելլիգենցիայի շահերը մի տեղ համապատասխան

*) Salvemini-ի այս գրության, ինչպես և Շտրասսերի վերահիշած հոգովածի հետ մենք ծանոթացել ենք «N. Z.»-ի նախկին տարիների համարներից:

**) Հայկական նացիոնալիզմին մեր այստեղ պաշտպանած բնահատուկ տեսակետով մոտեցել էր «Պայքար»-ի մեջ իր մի քանի հոգովածներում ընկ. Ամիրանը: Նա իրավամբ գտնում է, վոր հայ «ազգասիրների» վերջին զարնուրելի վաճիրը մոշ պատահականություն է և վոչ ել «ռուսանտիզմից» առաջացած մի սխալ Հայ ինտելլիգենցիայի համար, «ազգասիրությունը» պարզապես հացի

են լինում բուրժուական ավելի զորեղ տարրերի շահերին, իսկ յերկրորդ տեղը՝ հակառակ են լինում ամբողջ ժողովրդին շահերին: Իրա համեմատ նացիոնալիզմը տարբեր ձևեր ու արտահայտություններ և ունենում և տարբեր չափով փաստակար և լինում զանազան յերկրներում:

Բայց այդ բոլոր որինակաները և մեր վերևի ասածները, թվում ե, թե բավականաչափ պարզ ցույց են տալիս:

Նախ, վոր ինտելիգենցիան՝ միշտ անձնուրաց, ոգով կերակրվող ու անմարմին յերկնային եակներից չի բաղկացած, ինչպես կարծում են միամիտ մարդիկ, այլ բուրժուական հասարակության մեջ մի վորոշ սոցիալական խավ և, վորը,—ինչպես և ամեն մի ուրիշ սոցիալական խավ—իր գործունեություն մեջ առաջնորդվում և հողեղեն ու նյութեղեն յերկրային շահերով:

Յերկրորդ՝ վոր նրա շահերը, ինչպես ամբողջ բուրժուազիայի շահերը ներկա պատմական շրջանում, դադարել են համապատասխան լինելուց ազգերի զարգացման ու առաջադիմության գործին:

Յերկրորդ՝ վոր չնայած ադ հանգամանքին, ինտելիգենցիան, վորն իր պրոֆեսիայով առանձնապես

խնդիր» և, — և այդ վոչ միայն բառիս պատմա-փիլիսոփայական իմաստով, այլ և առորյա՝ գոնեիկ անձնական մտքով: Յեղիկ են, ինարկե, իսկական «ոռմանտիկ» առանձին անհատներ Սիմեոն Չավարյանի նման, բայց հայ ինտելիգենցիան, իրե և ամբողջությամբ, իր տանկա հայկական պրոպագանդով և իր նացիոնալիստական գործունեությամբ Ռուսաստանում ծառայել և միայն իր և «ազգասիրար» իրեն կերակրող կովկասահայ բուրժուազիայի շահերին, զոհարելով նրանց վերին յերկու տասնամյակների ընթացքում հայ ժողովրդական մասսաների առաջադիմությունը, իսկ նորերս նաև նրանց ֆիզիկական գոյությունը:

շահագրգռված և նացիոնալիստական իդեոլոգիայի պահպանումով, շարունակում և հռչակել իրեն ազգի հոգատար ու ազգի «փրկիչ»: Վոր, զրգված իր շահերից և հաճախ ձևուք ձևուքի սոված այս կամ այն իշխող ուժերի հետ, նա շարունակում և իր «ազգասիրական» պատիր ֆրազներով ու քարոզներով մոլորեցնել ժողովրդական մասսաները համարյա միշտ ահագին փաստեր հասցնելով առաջադիմության գործին, իսկ յերբեմն և դարհուրելի պատուհասներ բերելով իրենց ազգերի գլխին:

Ժամանակակից ինտելիգենցիայի ու ժամանակակից նացիոնալիզմի այս բնորոշումից հետո՝ ընթերցողի համար պետք և հասկանալի լինի, թե ինչու այսօր հետևողական մարքսիզմն այդ աստիճանի կատարի կռիվ և մղում նացիոնալիզմի դեմ: Յեթե վերցնենք մասնավորապես մեր փոքրիկ հայկական իրականությունը, դուք կտեսնեք, որինակ, վոր «Պաշարի» լուրարանչուր համարը մի-մի կենդանի բողոք և նացիոնալիզմի և նացիոնալիստների դեմ և հրամայական պահանջ և ամեն մի գիտակից մարքսիստի համար:

Վորո՞նք են այն հիմնական հասարակական սկզբբունքները, վոր հակադրում և միջազգային հետևողական դեմոկրատիան նացիոնալիզմին ընդհանրապես, վորո՞նք են քաղաքի շինարարությունն այն կոնկրետ ձևերը, վոր նրան առաջըրկում են դժբախտ մանր ազգություններին, վորո՞նք կրում են այսօր իրենց ուսերի վրա մի կողմից՝ մեծ իմպերիալիստական պետությունների, մյուս կողմից՝ սեփական իշխողների և «ազգասերների» կրկնակի ծանր լուծը,—դա մի առանձին նյութ և, վորին գուցե վերադառնանք մի ուրիշ անգամ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

	Եջ
1. Առաջարան	3
2. Գալիք ընտրութիւնները Թիֆլիսում և Դաշ- նակցութիւն կուսակցութիւնը	7
3. Զիաթիսանովի ճառը և «Ալիքի» ազդասիւ- ները	25
4. Դաշնակցութիւնը—«սլոլեհաարիատի զեկա- վար»	30
5. Դաշնակցական համագումարը Եջմիածնում	35
6. Ընտրողական պայքարը	40
7. Զորքը չեզոք պեռք և լինի	44
8. Ինտելլիգենցիան և նացիոնալիզմը	48

1221



ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.

«Ազգային գրադարան



NL0196242

